№ 286 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 286

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՍԻՆԷՄՕ-ԹԱՏՐՈՆ „ՄՕԴԵՐՆ“

Այսօր, ծրագրից դուրս, ցոյց կը տրվի ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԱՏԹԷՈՍ II-Ի ԹԱՂՈՒՄԸ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ **1911** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պոստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նախ. հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կոպ. նամականիշ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Հին բաժանորդներից խնդրվում է կցցել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՏԹԷՈՍ II-ի թաղումը ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ՆԿԱՐ Ս. Օ. Իվանիցկայայի ԹԱՏՐՈՆԻ

Առանձին պատկերներ.—Կաթողիկոսի բնակարանը։ Էջմիածնի Տաճարը։ Դրադարանը։ Թանգարանը։ Ճեմարանը։ Լիճը և անտառը։ Կաթողիկոսի մարմնի յուղարկաւորութիւնը Վեհարանից։ Տաճարի շուրջը կատարված սգահանդէսը։ Կաթողիկոսի մարմնի և գերեզմանի վրա կատարված ծիսակատարութեան հանդէսը։ Թաղումը։

(առ.) 1417. 1—1

Հանգուցեալ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ անվճար

ԻԶՄԻՐԼԵԱՆԻ ՄԵԾԱԴԻՐ 18 ԳՈՅՆԱՎ ՏՊԵՂ ՊԱՏԿԵՐԸ

Ստանհնի սրբազան հոյակապ դարաւոր կամարների տակ՝ մինչև նոր տարի հատը 3 ր. փոխարէն, ճանապարհածախսով, յատուկ խողովակներում

1 ր. 20 կ.

Այնուհետև հատը դարձեալ 3 ր.։ Քսանհինգ հատը մի կապոցով մինչև նոր տարի 25 ր.։ Ցանկալի է, որ այս շքեղ պատկերով իւրաքանչիւր հայի տունը զարդարվի։

Դիմել՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ. Елизаветинская, 39.

(ե.հ.կ.) ա. 1386. 6—5

Էլէքտրո-թատրոն „ԱՊՕԼԼՕ“

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 23 ին, ԲՈՅԻ ՀԱՐՈՒՍՏ ԾՐԱԳՐԻՑ, կը ցուցադրվեն 2 նկարներ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԱՏԹԷՈՍ II-Ի ԹԱՂՈՒՄԸ

ԱՎԷ ՄԱՐԻԱ,

կամ ԹՈՔԱԽՏԱՒՈՐ ԿԻՆ

երգեհոնի և ջութակի նուագածութեամբ հանդերձ։
Գունօյի «Ավէ Մարիան» կը նուագէ մանկահասակ ջութակահար Միշէլ Պալցեվը։

1418. 1—1

Adresse Télégraphique SANITAS

ՆՈՎԻԿՈՎԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ

ԱՒԵՐՏՐԻ

ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

Ընկեր. պահեստում (Եւանգուլօվսկայա փ. սեփ. տուն) ԲԱՑՎԱԾ է ամեն օր, առ. ժամը 10-ից մինչև 2-ը և 5-ից մինչև 8 ը երեկոյեան

ՏՕՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ

⊱ ՄԵԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ⊰

ԳՆԵՐԸ ԲԱՒԱԿԱՆԱՉԱՓ ԷԺԱՆԱՑՎԱԾ ԵՆ՝

այդ ապրանքի վաճառումը ընդհատելու պատճառով։

Адресъ Телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

1416. 1—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. Խորհուրդը

հրաւիրում է պ. պ. անդամներին Ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որ կայանալու է դեկտեմբերի 26-ին և 27-ին, կիրակի և երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ին Ընկերութեան դահլիճում՝ Աբաս-Աբադեան հրապարակ, սեփական տ., № 7 (Абасъ-Абадская площадь, № 7, с. д.), որտեղ քննվելու և հաստատվելու են կենտրոնի և ճիւղերի 1911 թ. նախահաշիւները, Ադքատախնամ Մասնաժողովի կանոնները, Ընկերութեան 30-ամեայ գոյութեան տօնելը, իշխ. Տ. Ա. Թոջամինասեանի կտակած 15,000 ր. գումարի մասին, և ընթացիկ հարցեր։ 1410 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ

ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ.

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 23-ին Հայոց Դրամ. Ընկ. Թատերասէրների խումբը Մասն.ակցութեամբ դերասանների կը ներկայացնէ

Ոճրագործի ընտանիքը

Դրամա 5 գործ., հեղ. Ջիակոմետիի, Թարգ. Էմին Տէր-Գրիգորեանի

Կօռռադօյի դերը կը կատարէ պ. ԶԱՐԻՖԵԱՆԸ

Սկիզբն է ճիշդ 8 ժամին երեկոյեան։

Տեղերի գները 5-ից մինչև 50 կոպէկ։

Ծանօթութիւն.—Ամսիս 12-ի չկնիբով ծախված տոմսակները զօրութիւն ունեն այս ներկայացմանը։

Ռէժիսեօր՝ Ա. Արմէնեան

1380. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 23-ին

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

կը ներկայացնէ

ՄԻՐՐԱ ԷՖՐՈՍ

Պիէս 5 արար., Ֆօրդինի, Թարգմ. Վ. Տէր-Ղևոնդեանի

Գլխ. բէժիսեօր՝ Ա. Արմէնեան

Երեկոյթին կը նուագեն զինուորական և բաժշտական խումբը և սազանդարներ։

Ներկայացումից յետոյ ՊԱՐԵՐ։

Հիւրերը՝ յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են 50-ական կոպէկ։

Ներկայացման տոմսակները՝ 25—75 կ. արժողութեամբ՝ ծախվում են Ժողովարանի շվէյցարի մօտ։

Ներկայացման սկիզբը երեկ. ճիշդ ժ. 8 ին։

1411. 1—1

Հինգշաբթի, դեկտեմբերի 23-ին Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում կայանալու է

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍ. ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Օրակարգի խնդիրներ.

1) «Բամբակագործութեան փորձերը Նոր-Բայազետ կալուածքում»—զեկուցում Ստ. Մալխասեանի։
2) «Բամբակի բերքը 1910 թւին Անդրկովկասում»—զեկուցում ագրոնոմ Ն. Պ. Տարատինովի։
3) «Ջրբաշխների դերը բամբակագործութեան մէջ»—զեկուցում Ա. Աթանասեանի։

Սկիզբը երեկ. ժամը 7-ին։ Կարող են ներկայ լինել նաև հիւրեր։ 1414. 1—1

ՅԻՇԵՑԷՔ ՆՐԱՆՑ

Յիշեցէք նրանց։

Յիշեցէք այն խեղճերին, որոնք տառապում են կարիքից, որոնք զրկված են կուշտ հացից, տաք հագուստից, որոնք չունեն բնակարան, ապաստարան։

Ձմեռ է, ցուրտ է։

Մօտեցել են և տօները։ Մեծ, հանրային տօներ։ Ամենքը պատրաստվում են հանգստանալու, ուրախանալու, խնճոյքներ անելու։ Պատրաստվում են ամեն տեսակ զուարճութիւններ։

Խեղճն էլ պահանջ ունի մխիթարութիւնների։ Խեղճի երեխաներն էլ պահանջ ունեն զուարճութիւնների։

Բայց խեղճերը և նրանց զաւակները մոռացել են մտածել զուարճութիւնների մասին։ Նրանք կարօտ են ամենատարրական կարիքների բաւարարութեան—հասարակ կերակրին և հագուստին։

Յիշեցէք նրանց։

Յիշեցէք գոնէ այժմ։

Թող տօնը գոնէ յիշեցնի ձեզ թշուառութեան մէջ տառապողների մասին։

Ծանր է կարօտեալի, տնանկի, սոված վիճակը։

Թեթևացրէք այդ վիճակը։

Խղճացէք ձեր կարիքաւոր եղբայրներին և քոյրերին։

Բաժին հանեցէք նրանց համար։

Մի մոռանաք նրանց։

Չը պիտի մոռանաք երբէք նրանց. բայց յաճախ մոռացել էք և մոռանում էք։

Գոնէ այժմ մտաբերեցէք նրանց։

Յիշեցէք կարօտեալին։

Եւ ցանկեցէք։ ...

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

—

Ամենայն Հայոց Կաթողիկոսի թաղմանը Մոսկվայի հայ գաղութի պատգամաւոր էր ընտրվել Լևոն Սարգսեան, որ նախ քան Էջմիածին գնալը՝ պայման էր դրել, որ Մոսկվայի հայ գաղութը մի խոշոր գումար հանգանակէ իր մէջ՝ յաւերժացնելու համար Իզմիրլեանի յիշատակը որևէ բարի գործով։ Այդ առաջարկը հաւանութիւն գտած լինելով գաղութի կողմից, Լևոն Սարգսեան եկաւ Էջմիածին և ներկայացրեց կաթողիկոսի թաղման Մոսկվայի հայ գաղութը։

—

Էջմիածնից մեզ գրում են.

Ցաւակցական հեռագիրներ եկել են և ամենահեռաւոր տեղերից՝ Խարբերդից, Տօմսկից, Երուսաղէմից, Կալիֆօրնիայից, Անգօրայից, Կարինից, Զմիւռնիայից, Կահիրէից, Աղեքսանդրիայից, Սպահանից, Բիրմանիայից, Հնդկաստանի այլ քաղաքներից։

Շուշու քաղաքային Դումայի կողմից ցաւակցական հեռագիր ուղարկել է քաղաքագլուխ Գ. Քալանթարեան, իսկ թեմի հոգևորականութեան և ժողովրդի կողմից ոչ ոք չէր ուղարկվել Էջմիածին, այլ կօնսիստօրիայի նախագահ Եղիշէ վ. Ահարոնեան հեռագրել էր Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսէսեանին լինել թեմի ներկայացուցիչ։

—

Վրաց թեմի հոգևորականութեան ժողովը ուղարկել է հետևեալ հեռագիրը տեղապահին.

Վրաց թեմի հոգևորականութեան համագումարը բաժանելով Հայոց Եկեղեցուն հասած վիշտը, մահվամբ իր Պետի և Կաթողիկոսի, իր նիստը բանալիս իր պարտքն համարեց յարգել Նորին Սրբութեան յիշատակը՝ ոտքի կանգնելով։

—

Կ. Պոլսի նախկին պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան հետևեալ հեռագիրն է ուղարկել տեղապահին.

Վշտակցութիւն սինօդին և միաբանութեան վասն այրիացման Մայր Աթոռոյ։

—

Լազարեան ճեմարանի վերատեսուչ Միլլեր հետևեալ հեռագիրն է ուղարկել տեղապահին.

Ընդունեցէք արևելեան լեզուների Լազարեան ճեմարանի անկեղծ ցաւակցութիւնը ճեմարանի առաջին պատուաւոր անդամ արժանաւոր Պատրիարք Կաթողիկոս Մատթէոս II-ի մահվան առիթով։

—

Պետերբուրգի „С.-Петербургск. Вѣдомости“ լրագրի դեկտեմբերի 14-ի համարում տպված է մի մեծ յօդուած «Հայոց եկեղեցու և ազգի Ծայրագոյն Հովուապետ և Կաթողիկոս Մատթէոս II Իզմիրլեանի յիշատակին» վերնագրով։ Այդ յօդուածի հեղինակ Մ. Ալլահվերդեան սկսում է այսպէս. «Դադարեց բաբախելու այն ազնիւ սիրտը, որը 40 տարվայ ընթացքում ծառայում էր ազնիւ հայերի մէջ սիրոյ, օրինականութեան և լօյալութեան տարածման, սկսած Եգիպտոսից, Բոսֆորի ափերից, Նէվա գետից և վերջացրած Էջմիածնով։ Նորից կուտակվեցին Էջմիածնի վրա սև ամպերը։ Յանձին Նորին Սրբութեան հայ ազգը կորցրեց իր ազնուագոյն ցաւողին և միջնորդին ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ, իսկ հայ հոգևորականութիւնը և ինտելիգենցիան ի դէմս նրա կորցրին անշահասէր աշխատողին, տաղանդաւոր քարոզչին ու աստուածաբանին և շիտակ վարչական անձին»։ Ապա մի ամփոփ պատկեր տալով Հանգուցեալի գործունէութեան մասին, յօդուածագիրը վերջացնում է այսպէս. «... յերից խորապէս յարգված Հովուապետի աճիւնների առաջ, ցանկանք, որ հայոց ազգը առաջիկայ կաթողիկոսական ընտրութիւններին Էջմիածնում միանայ և կանգ առնէ մի այնպիսի անձնաւորութեան վրա, որ մարմնացնէ Հանգուցեալ Հովուապետի պատգամները, որ յաճախ ասում էր. «Աշխատենք խելացի, չը դիմելով վտանգաւոր և անխոհեմ վարմունքների. պաշտպանենք, այո՛, մեր իրաւունքները, բայց օրէնքի սահմաններում և լեգալ ճանապարհով»։

—

Մեր ստացած ճիշդ տեղեկութիւնների հիման վրա, հանգուցեալ Կաթողիկոսը չէ առաջարկել կանդիդատներ Թիֆլիսի թեմի առաջնորդութեան համար։ Նա կամեցել է առաջ վերջնականապէս լուծել այն հարցը, թէ թեմական առաջնորդները պէտք է ընտրվեն թէ՞ նշանակվեն, և ապա տնօրինել ընտրելների մասին։

Մատթէոս II մի ամփոփ և պատճառաբանեալ գեկուցում է ներկայացրել Կովկասի Փոխարքային, որի մէջ, հիմնվելով Հայոց Եկեղեցու դարաւոր սովորութիւնների, «Պօլօժենիայի» յօդուածների և պետական օրէնքների վրա, ինչպէս և այն հանգամանքի վրա, որ ինքն գալով Էջմիածին, արդէն գտել է այդպիսի մի դրութիւն սահմանված, խնդրել է Փոխարքային միջնորդել մինիստրների խորհրդի նախագահի առաջ՝ թոյլատրելու գործադրութիւնը իր հրատարակած կանոնների թեմական ժողովների մասին։ Մինչ այդ հարցի վերջնական լուծումը հանգուցեալ Կաթողիկոսը մտադիր չէ եղել առաջարկել Թիֆլիսի թեմի համար առաջնորդացուներ, այլ մտադիր էր կարգադրելու, որ թեմի առաջնորդական գործերը ժամանակաւորապէս վարէ կօնսիստօրիայի նախագահ Եփրեմ եպիսկոպոսը։

—

Կաթողիկոսական տեղապահ Սուրէնեան արքեպիսկոպոսը պաշտօնապէս հրամանագրել է, որ Թիֆլիսի թեմի առաջնորդական գործերը, ինչպէս և Ներսիսեան դպրոցի, Յովնանեան դպրոցի հոգաբարձութիւնների նախագահի պաշտօնը ժամանակաւորապէս վարէ և ընթացք տայ նրանց կօնսիստօրիայի նախանդամ Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեանը։

—

Ցաւակցական հեռագիրներ տեղապահին

Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան առթիվ ուղարկել են Ալ. Մանթաշեան և Դ. Աւան-Իւզբաշեան։

—

Էջմիածնից մեզ հաղորդում են, որ Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ ժամանակաւորապէս դադարեցված են իրանց պաշտօններից սինոդի անդամ Յուսիկ վ. Զոհրաբեան, Շուշու կոնսիստորիայի նախանդամ Եղիշէ վ. Ահարոնեան և Վլադիկավկազի քահանայ Սաւիկեան։

ԼՈՆԴՈՆԻ ԴԷՊՔԸ

—

Լօնդօն, 21 դեկտեմբերի

Երէկ երեկոյեան, ոստիկանութիւնը անակնկալ կերպով Գուդօդիչում, ուր վերջերս կատարվեցին գողութիւններ, հեռացրեց մի քանի տների կեցողներին։ Այսօր առաւօտեան 1000 ոստիկաններ շրջապատեցին այն տները, ուր կարծվում էր թէ թաքնվել են 2 մարդասպաններ՝ Պեօտր և Ֆրից։ Երկու կողմից եղաւ երկար հրացանաձգութիւն։ Վիրաւորվեց մի գաղտնի ոստիկան։ Ոստիկանութեանը օգնութեան հասաւ շոտլանդական գնդի մի վաշտ։ Տեղի է ունենում կանոնաւոր կռիւ։ Ցերեկվայ ժամը 2-ի մօտերը կռիւը հասաւ իր գագաթնակէտին. ամբողջ տունը բոցերի մէջ է. տանիքը փլվեց, որովհետև կեցողներից ոչ ոք չը փախաւ. նրանք կամ ինքնասպանութիւն գործեցին կամ այրվեցին։ Հրդեհաշէջները մտան տունը, խուզարկելով փլատակները։ Կարծում են, որ դիակները չեն ճանաչվի։ Ժամը 3-ի մօտերը գտնվեցին 6 դիակ։

Տեղեկութիւններ ստանալով, որ Պեօտր և Ֆրից, որոնք կասկածվում են դեկտեմբերի 4-ին ոստիկաններին սպանելու մէջ, թաքնվում են Մայլէնդում, ոստիկանութիւնը, օգնութեան կանչելով զօրքերին և մաքրելով փողոցը բնակիչներից, մօտեցաւ տանը և պահանջեց, որպէսզի կեցողներն անձնատուր լինին։ Յանցագործները կրակ բացին ատրճանակներից։ Երբ մի ոստիկան ընկաւ, վիրաւորվելով կրծքից, ոստիկանութիւնը և զօրքերը սկսեցին շրջապատել տունը և քանդեցին պատուհանները։ Սկսվեց իւրաքանչիւր սենեակի փնտրակհտրութիւն։ Ներսում գտնվողները եռանդով պատասխանում էին։ Գնդակների աղմուկը յիշեցնում էր Մակսիմի թնդանօթներից պարպելը։ Կրակը շարունակվեց մի քանի ժամ։ Հարևան տների տանիքներին կային շատ հանդիսատեսներ։ Կէսօրվայ ժամը 2-ին գնդակաձգութիւնը դադարեց։ Տան միւս պատուհաններից ծուխ երևաց. յանցաւորները տունը հրդեհեցին։ Հրդեհաշէջները գտան երկու այլանդակված դիակներ, որոնցից մինը ոստիկանութիւնը նոյնացրեց Ֆրիցին։ 4 հրդեհաշէջներ ջարդվեցին փլված յատակից. վիրաւորվեցին երկու ոստիկան, մի զինւոր և երեք հոգի հասարակութիւնից։

Ամբողջ ժամանակ ներկայ էր ներքին գործերի մինիստրը։ (Հ. Փ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պետերբուրգ, 21 դեկտեմբերի

Զինուորական մինիստրի զեկուցագրի վրա Թագաւոր Կայսրը բարեհաճեց մակագրել. «Շնորհակալ եմ չէչէն ժողովրդի ներկայացուցիչներից՝ յայտնած հաւատարմութեան և Ինձ ու Ռուսաստանին ծառայելու պատրաստականութեան համար»։ (Հ. Փ.)

—

Հելսինգֆօրս, 21 դեկտեմբերի

Ընտրութիւններին մասնակցելը առաջին օրը երկրի զանազան տեղերում տարբեր է. օրինակ՝ Իւվեասկիւլայում 119, Վիլմանստրանդում 294 (?) 22,312-ից, Կեմում 152՝ 782-ից, Հելսինգֆօրսում 20,031՝ 64,700-ից։ Հելսինգֆօրսում նախկին ընտրութիւններին առաջին օրը մասնակցել էին 21,955։ (Հ. Փ.)

—

Մադրիդ, 21 դեկտեմբերի

Վիգօյից հաղորդում են, որ Մօնսաօյի իշխանութիւնները (Պօրտուգալիայում) բռնել են երկու աւտօմօբիլ զէնքով, որ տարվելու էր Պօրտուգալիա։ Վալէնսադօյի և Մինօյի զօրքերը կազմ ու պատրաստ են։ (Հ. Փ.)

—

Լիսաբօն, 21 դեկտեմբերի

Լիսաբօնի պաշտօնական լրագրում տպված է, որ Իտալիայի և Պօրտուգալիայի միջև Մարիա-Պիա Թագուհու րենտայի մասին պայմանագիրը կը կապվի պօրտուգալական պարլամենտի գումարումից յետոյ։ Առ այժմ Թագուհին կենսաթոշակ կը ստանայ ամսական երկու միլիոն րէյս։ (Հ. Փ.)

—

Վիէննա, 21 դեկտեմբերի

Կայսրի առողջական դրութեան մասին ստացված լուրերը նպաստաւոր են։ Գիշերը նա հանգիստ անցրեց. երեկոյեան զբաղվեց գործերով։

Դեկտ. 28-ին նշանակված պալատական պարահանդէսը յետաձգվում է յունվարի 3-ին՝ կայսրի տկարութեան պատճառով։ (Հ. Փ.)

—

Նիւ-Եօրկ, 21 դեկտեմբերի

Գօնդուրասի նախկին նախագահ Բօնիլիան, գալով Նիւ-Օրլէանից «Հօրնէտ» շոգենաւով, ափ իջաւ Պուէրտօ-Կօրտէսի մօտերը և հաչակեց իրան հանրապետութեան նախագահ։ «Հօրնէտը» պատրաստվում է գնդակոծել քաղաքը, եթէ նա անձնատուր չը լինի։ Գօնդուրասի Վաշինգտոնի դեսպանը բողոքեց, որ թոյլ է տրված Նիւ-Օրլէանից մեկնել այն նաւին, որ նշանակված էր Գօնդուրասի դէմ յեղափոխական ձեռնարկութեան համար։ (Հ. Փ.)

—

Մուկդէն, 21 դեկտեմբերի

Ռուսաց և եապօնական դեսպանների բողոքի պատճառով՝ արտահանվող հացահատիկի վրա նոր տուրք նշանակելու վերաբերմամբ՝ չինական արտաքին գործերի մինիստրութիւնը այդ հարցի առիթով պահանջեց գեն.-նահանգապետի եզրակացութիւնը։

Հասարակական կազմակերպութիւնների միութիւնը 5-րդ ուղերձն է պատրաստում պարլամենտի գումարման մասին։ (Հ. Փ.)

—

Սոֆիա, 21 դեկտեմբերի

Ազգային ժողով։ Կառավարական կուսակցութեան երկու հռետորներ առաջարկում են դատարանին յանձնել նախկին մինիստրներին։

Առաջադիմականների պարագլուխ Դանէվը պնդեց, որ նրա կաբինէտի քաղաքականութիւնը խաղաղասիրական էր և առիթ տուեց Մակեդոնիայում բարենորոգումներ մտցնելու։ Դանէվը մատնանշում է, որ Թիւրքիան չէր մտածում յարձակվել Բուլղարիայի վրա, և ձգտում է այն՝ իբր նա համաձայնութիւն կապեց Լամզդորֆի հետ, որի ոյժով Ռուսաստանը իրաւունք էր ստանում ղեկավարել Բուլղարիայի արտաքին քաղաքականութիւնը։ Մալինօվը յայտնում է, որ Մակեդոնիան երբեք ապստամբութեան չէ կանչվել որևէ բուլղարական մինիստրից։ (Հ. Փ.)

—

Օդեսսա, 21 դեկտեմբերի

Քաղաքային դուման 500 րուբլի յատկացրեց Պետերբուրգի պօլիտեխնիկումի ակադեմիական-ուսանողներին։ (Հ. Փ.)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Վաղարշապատ, 19 դեկտեմբերի

Երէկ մօտ ժամը 12-ին Վաղարշապատի երկու եկեղեցիների քահանաները ս. Աստուածածին եկեղեցում հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեցին հանգուցեալ Կաթողիկոսի հոգու փրկութեան համար։ Հոգեհանգստին ներկայ էին երկսեռ դպրոցի աշ.-աշակերտուհիները իրանց ուսուցիչ-ուսուցչուհիներով։

Աւագ-ուսուցիչ Ս. Գեւորգեանը աշ.-աշակերտուհիներին բացատրեց, թէ ինչ է պատրիարքութիւնը և կաթողիկոսութիւնը և երկար ու բարակ նկարագրեց՝ թէ ով էր Իզմիրլեանը և ինչեր կատարեց այդ բարձր պաշտօններում։

Թէ եկեղեցու ցուրտ լինելը և թէ աւագ ուսուցչի երկար խօսելը, որը լաւ տպաւորութիւն թողեց բոլորի վրա թոյլ չը տուեց ուրիշներին ևս խօսելու։

Տեղիս դպրոցների կողմից ընտրվել է պատգամաւոր Կաթողիկոսի թաղման առիթով աւ.-ուսուցչուհի տ. Ել. Մուշեղեանը։

—

Գանձակ, 19 դեկտեմբերի

Դեկտեմբերի 11-ին անսպասելի կերպով եկեղեցիների զանգերը երեկոյեան ժամերգութիւնից յետոյ տխուր ու սպանիչ ողբումներով սկսեցին ղօղանջել։ Հայկական մասը ցնցվեց ու մռայլ պատկեր ստացաւ։ Կայծակի արագութեամբ բերանից բերան անցաւ Վեհափառի մահվան գոյժը, որ յայտնել էր հեռագրով կոնսիստօրիայի նախանդամ Եփրեմ եպիսկոպոսը տեղիս փոխանորդին։ Ամենքին մի խոր վիշտ բռնեց. ամենքի դէմքերին կարդացվում էր, որ հայոց եկեղեցին զրկվեց մի պետից, որից նա շատ բան ունէր սպասելիք, բայց անգութ ու հրէշ մահը, խլեց նրան մեր տխուր ու փոշոտ իրականութիւնից։

Ծխական դպրոցի բոլոր սաները 13, 14 և 15 դեկտ. արձակվեցին զբաղմունքից։ Հոգեհանգիստներ կատարվեցին բազմաթիւ ժամւորների, պետական և ծխական դպրոցի սաների ներկայութեամբ ու նրանց դասատուների ներկայութեամբ։ 13-ին մի ժողովում, որ տեղի ունեցաւ փոխանորդարանում, քաղաքի կողմից, Վեհի թաղմանը ներկայ լինելու համար պատգամաւորներ ընտրվեցին Ա. Տէր-Սահակեանցը, Մ. Եպիսկոպոսեանը, բժ. Մելիք-Բեգլարեանը, իսկ Թուրք հասարակութեան կողմից ընտրվեց Իսա Ջիհանխանօվը, որոնք արդէն էջմիածին են։

Ս. Նունէի օրիորդաց գիմնազիայում փոխանորդի մասնակցութեամբ տեղի ունեցաւ հոգեհանգիստ հայ, ռուս և այլազգի պատկանող սաների ներկայութեամբ։

Իսկ դեկտեմբերի 19-ին քաղաքը մի առանձին շարժման մէջ էր։ Առաւօտվանից ս. Լուսաւորիչ եկեղեցու զանգերը տխուր ու միապաղաղ ղօղանջում էին։ Անթիւ երկսեռ բազմութիւն, ժամը 10-ից, գտնվում էր եկեղեցու բակում։ Պատարագին ներկայ էին ծխական և պետական ուսումնարանների դասատուները իրանց սաներով, նահանգապետը իր օգնականով, ժողովրդական դպրոցների վերատեսուչը, ախունդը իր ընկեր անդամներով, ռուսաց եկեղեցու աւագ երէցը, զինուորական շտաբի ներկայացուցիչը, պարսից կօնսուլը իր թիկնապահներով և այլ պաշտօնական անձինք։ Պատարագին երգում էր Յովհաննէս Արզումանեանցի քառաձայն խումբը, որ խոր տպաւորութիւն թողեց ժամւորների վրա։ Հոգեհանգստից յետոյ փոխանորդ Ղ. վ. Փսերեանը զգացված ընդգծեց հանգուցեալ Կաթողիկոսի կենսագրական մասը, ցոյց տալով ով էր նա, ապա վերջը կանգ առաւ հայ ազգի անտարբերութեան վրա, որ նա ընտրել գիտէ և թաղել, բայց աջակցութիւն իր ընտրեալին՝ շատ հեռու է նրանից... Փոխանորդի ճառը խոր տպաւորութիւն թողեց։

Ժամերգութեան վերջը, Լուսաւորչի ծխական դպրոցում սուրճ տրվեց բոլոր պաշտօնական ներկայացուցիչներին։

Աւելորդ չեմ համարում ասել, որ կարգապահութիւնը պակասում էր։ Սարգօ

—

Դերբենդ, 19 դեկտեմբերի

Ազգիս Վեհափառ Հայրապետ Մատթէոս II-ի անսպասելի մահը ունեցաւ իր խոր ազդեցութիւնը նաև տեղիս հայ հասարակութեան վրա։ Այսօր ամեն դասակարգի և հասակի երկսեռ բազմութիւն շտապում էր եկեղեցի իր սրտական յարգանքն ու պատիւը տալու տիրեցեալ Հայրապետի նշխարներին։ Գաղութիս անշուք եկեղեցին տօնական տեսք էր ընդունել. խուռն բազմութիւնը շրջապատել էր եկեղեցում դրված գլխաւեղանը, որի վրա դրված էր երկու պսակ՝ մինը մետաղեայ՝ տեղիս ըէալական դպրոցի և օրիորդաց գիմնազիայի աշակերտ-աշակերտուհիներից հետևեալ մակագրութեամբ. «Մատաղ սերնդի կրթութեան մեծ հովանաւորողին», իսկ միւսը հիւսած թարմ ծաղիկներից. Դերբենդի մի խումբ երիտասարդներից՝ «Ազգին անձնուէր Իզմիրլեանին» մակագրութեամբ։ Պատարագին ներկայ էին նաև տեղիս դպրոցների հայ աշ.-աշակերտուհիները։ Պատարագիչ Աբրահամ ա.-ք. Սպանդարեանը պատարագի միջոցին մի քանի խօսք ասաց հանգուցեալ Կաթողիկոսի յիշատակին. ապա հոգեհանգստի ժամանակ խօսեց Տիգրան ք. Վարդանեանը, որը իր զգացված ճառում բնորոշեց Խրիմեան Հայրիկին և Իզմիրլեանին, ցոյց տալով այդ երկու պատմական դէմքերի, վիթխարի անձանց հայեցքները կաթողիկոսական պատասխանատու պաշտօնի վերաբերմամբ, և երկար կանգ առաւ Մատթէոս Բ.-ի պատրիարքական փայլուն գործունէութեան վրա. ապա յիշելով նրա կարճատև կաթողիկոսութեան գործունէութիւնը, ընդգծեց հայ եկեղեցու և ազգին հասած մեծ կորուստը, յանձին օրոց և մաքուր ու անբիծ գործիչ Իզմիրլեան Հայրապետի։

Տրված են նաև ցաւակցութեան հեռագիրներ հայր տեղապահի անունով, մէկը Կ. Հ. Բ. Ընկ. Դերբենդի ճիւղի վարչութեան անունից՝ հետևեալ բովանդակութեամբ. «Կ. Հ. Բ. Ը. Դերբենդի ճիւղի վարչութիւնը խորապէս վշտացած Մատթէոս Բ. Կաթողիկոսի մահվամբ, ակնածութեամբ խոնարհում է ծնկաչոք Նորին Սրբութեան նշխարների առաջ»։ Մէկն էլ Դերբենդի հայ երիտասարդութեան կողմից։ Ռուբէն Տէր-Գրիգորեան

—

Հին-Նախիջևան, 19 դեկտեմբերի

Վեհափառ Կաթողիկոսի թաղման օրն այստեղի եկեղեցում ևս հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց։ Եկեղեցին, սկսած քաղաքապետից, քաղաքագլխից, տեղական ղազիից, ծառայող դասակարգից մինչև սգաւոր կանայք, ծայրէ ի ծայր լի էր։ Հոգևոր կառավարութեան նախանդամ Հ. Սահակ ք. Տէր-Մարգարեանն ազդեցիկ դամբանականով նկարագրեց սգակիցներիս յուսահատ և սպասողական դրութեան ճշգրիտ պատկերն, ապա պարսից ղազին, ուսումնագէտ շէյխ-Բեարիժը՝ սրտառուչ խօսքերով դիմեց ժողովականներին, բացատրելով, որ մեծ հանգուցեալի խօսքերն աստուածային էին, իսկ ինքը մարդու պատկերի մէջ մտած մի վեհ կրօնական հոգի, որի նպատակն էր ի մի ձուլել մարդկութիւնը՝ դէպի բարին և բարձրն. ի հաստատութիւն որի ահա նրա սուրբ հոգին է, որ միացնում է մեզ,—մարդկութեան զանազան խաւերի և դաւանանքի ներկայացուցիչներիս,—կնքեց ղազին իր իմաստալից քարոզը։ Այնուհետև զանգակների տխուր ղօղանջիւնի տակ ցրվեցին բոլորն էլ, մինչ սևակիր լալկան կանայք շրջապատել էին սգի քօղով ծածկված դամբարան ձևակերպող պատուանդանի դիմաց և աղիողորմ լալիս էին... կորցրած Վեհի և սգի մէջ մտած հայութեան համար։ Ա. Գ.

—

Ախալցխա, 19 դեկտեմբերի

Վեհի մահվան գոյժը, ինչպէս արդէն հաղորդել եմ, ամսիս 11-ին իմացաւ հասարակութեան միայն այն փոքրագոյն մասը, որոնք գտնվում էին ակումբի թատրոնում, երեկոյեան մօտ $8^{1}/_{2}$ ժամին։

Անցեալ կիրակի օրվանից ս. Փրկիչ եկեղեցում սկսվեցին հոգեհանգիստները։ Ծխական դպրոցներում ի նշան սգի դադարեցին պարապմունքները 3 օրով։ Հոգեհանգիստներին ամեն օր ներկայ էին լինում ծխական դպրոցների աշակերտ-աշակերտուհիները իրանց ուսուցիչ-ուսուցչուհիներով. մերթ ընդ մերթ լինում էին նաև վրացի, ռուս և թուրք հոգևորականութիւնների ներկայացուցիչները։

Իսկ այսօր պատարագից յետոյ տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ, որին ներկայ էին՝ ծխական դպրոցների, մասնաւոր պրօգիմնազիայի սաներն ու սանուհիները ուսուցչական կազմերի հետ, գաւառապետի օգնականը, թուրք հոգևորականութեան ներկայացուցիչը և հայ ու օտար երկսեռ խուռն աղօթողներ։ Պատարագին երգում էր Տէր-Կարապետեանի երկսեռ խումբը։ Քարոզ խօսեց Մինաս քահ. Աղնաւուրեանը, որը բացատրեց Իզմիրլեանի կարճատև գործունէութեան նշանակութիւնը։ Եկեղեցու գաւթում շարքով կանգնած էին սև քօղով պատած համքարական դրօշակները։ Ախպէր

—

Նոր-Նախիջևան, 19 դեկտեմբերի

Յարակցում եմ երէկվայ հաղորդածիս, որ Հանգուցեալ Կաթողիկոսի յուղարկաւորութեան հանդիսին ներկայ գտնվելու համար Նոր-Նախիջևանի իրաւասուների ժողովը վճռեց ներկայացուցիչ ուղարկել բժ. Միրզօյեանին և դնել պսակ։

Իսկ ծխականների կողմից ներկայ պիտի լինէին «Լոյս» շաբաթաթերթի խմբագիր բժ. Ռէիզեան և վաճառական Մ. Շապօշնիկեան, որոնք նոյնպէս պիտի դնէին պսակ։

Ամսիս 14-ին քաղաքային ուպրավայում կատարվեց հոգեհանգիստ Մուշէ և Վահան վարդապետների ու քահանաների մասնակցութեամբ. ներկայ էին քաղաքագլուխը և բոլոր իրաւասուները. երգում էր դպրանոցի և Խրիմեան դպրոցի խառն խումբը։ Ապա քաղաք. խորհուրդը արտակարգ նիստ ունեցաւ և որոշեց 1000 ր. բաժանել քաղաքիս չքաւորներին, ուղարկել բժ. Միրզօյեանին պատգամաւոր՝ թաղմանը ներկայ լինելու և արծաթէ պսակ դնելու համար, իսկ թաղման օրն էլ հոգեհանգիստ կատարել աւ. եկեղեցում։ Ամսիս 15-ին հանգստարանի եկեղեցում քաղաքիս սափրիչները կատարել տուին հոգեհանգիստ։

Քաղաքային վարչութիւնը 1,000 րուբլի վճռեց բաժանել տեղիս աղքատ դասակարգին, որոնից 500 ր. դնելով աղքատաց հոգաբարձութեան կարգադրութեան տակ, իսկ մնացեալը հարիւրական՝ առանց ազգի ու կրօնի խտրութեան՝ զանազան ընկերութիւնների (ի յիշատակ հանգուցեալ Կաթողիկոսի)։ Ալ. Աբէլեան

—

Ղարասուբազար, 15 դեկտեմբերի

Ամսիս 12-ին, կիրակի օրը, հեռագիրը գուժեց Ամենայն Հայոց Մատթէոս երջանկայիշատակ Կաթողիկոսի կսկծալի մահը։

Անմիջապէս ծխատէր Աստուածատուր քահ. Մեդնիկեանի ազդարարութեամբ բաւականաչափ հայեր շտապեցին եկեղեցի, ուր և կատարվեց առաջին հոգեհանգիստ։

Հետևեալ երկուշաբթի առաւօտեան, պատարագին ներկայ էին հայոց ծխական երկսեռ դպրոցի աշակերտութիւնը։ Տեղիս Պետրոս-Մարիամեան կարուձևի արհեստանոցի հայ և օտարազգի աշակերտուհիները գիմնազիաների հայ ուսանողութիւնը և երկսեռ հայ հասարակութիւնը։

Պատարագի վերջում հայր Մեդնիկեանը խօսեց հանգուցեալ Հայրապետի մասին։ Համառօտ նկարագրեց նրա անձնուէր և անշահասէր գործունէութիւնը իբրև քարոզիչ, Կ. Պօլսի կրօնական ժողովի անդամ, առաջնորդ և մանաւանդ իբրև անվեհեր Երկաթէ Պատրիարք, որի շնորհիւ ունեցաւ անսահման ժողովրդականութիւն։ Յիշեց նրա տաժանելի աքսորը և փառաւոր ու հանդիսաւոր վերադարձը Կ. Պօլիս քրիստոնեայ և մահմեդական ընդհ. ազգաբնակութեան խանդավառ ընդունելութեամբ։ Ապա պատմելով կաթողիկոսութեան կարճ շրջանում նրա սկսած ժողովրդական գործունէութիւնը իր հօտի աջակցութեամբ, ցոյց տուեց այն մեծ կորուստը, որ կրեցին հայ եկեղեցին և ազգը անմոռանալի Մատթէոս Հայրապետ Իզմիրլեանի վաղահաս մահով։ Այնուհետև կատարվեց հոգեհանգիստ և աղօթաւորները հեռացան ծանր տպաւորութեան տակ։ Մարգար Բարոյեան

—

Մօզդօկ, 14 դեկտեմբերի

Եկեղեցիների զանգերը տխուր ղօղանջում են։ Հոգեհանգիստ է կատարվելու ս. Ստեփաննոս եկեղեցում նորոգ հանգուցեալ հայոց ազգի և կրօնի պետ երջանկայիշատակ Մատթէոս Բ. Կաթողիկոսի հոգու հանգստութեան համար։ Ես էլ իբրև հայ շտապեցի եկեղեցի ազգիս պետի հոգու հանգստութեան համար աղօթելու։

Պատարագը մօտ էր վախճանին։ Ի՞նչ տեսնեմ։ 4-ից մինչև 4,500 հայ բնակչութիւնից եկեղեցում ներկայ էին ծխական դպրոցի հոգաբարձութիւնը, այն էլ ոչ լրիւ, ուսուցչական կազմն և աշակերտութեան հետ, ըէալական դպրոցի տեսուչ Աֆօնսկին՝ դպրոցում սովորող հայ աշակերտներով, քաղաքային դպրոցի հայ աշակերտութիւնը և մօտ 10—15 հասակաւորներ հայերից։ Երեխաները կարծեմ իրանք էլ էին ապշել, թէ ինչու միայն իրանք են եկել եկեղեցի, ինչու հասակաւորներ չը կան։ Ինքս ինձ մտածում էի, իրաւ, որտեղ են այս քաղաքի բնակիչները, ինչու եկեղեցում չը կան կանայք, երիտասարդութիւն, չը կան հասակաւոր տղամարդիկ։ Միթէ մօզդօկցիները չեն ուզում ճանաչել ու յարգել ազգի և կրօնի պետի յիշատակը։ Միթէ սրանց համար չը կայ մի սուրբ օր, որ համախմբված արտայայտեն իրանց ընդհանուր ազգային տխրութիւնը կամ ուրախութիւնը։ Մին էլ մաքովս անց էր կենում, գուցէ ժողովուրդը խաբար չունի Վեհափառի մահվան մասին։ Տարակուսանքս փարատելու համար դիմեցի կողքիս կանգնած հարևանին։ Նրանից իմացայ, որ ընդհակառակը քաղաքագլուխը օր առաջ յատուկ գուժկանի միջոցով յայտարարել է հասարակութեան Կաթողիկոսի վախճանը և խնդրած է եղել, որ ամսիս 14-ին առևտրականները, գոնէ պատարագի և հոգեհանգստի ժամանակ, խանութները փակեն և եկեղեցի գնան։

Թող հիմա ընթերցողը ինքը դատի. ինչու համար Մօզդօկի հայ հասարակութիւնը իր բացակայութեամբ չուզեց յարգել ազգի պետի յիշատակը։

Այս էլ պիտի աւելացնեմ, որ այդ օրը 50-ի չափ հայ առևտրականներից փակել էին իրանց խանութները միմիայն երեք հոգի. Իս. Գանջումեան, Թ. Մելքումեան և Եարալեանները։ Հայ-կաթօլիկ

—

Մերվ, 13 դեկտեմբերի

Անդրկասպեան երկիրը որքան էլ անջատված է Հայաստանից, բայց և այնպէս այս կողմերի հայերը, որոնք գաղթել են գլխաւորապէս առևտրական գործերով, չեն մոռացել իրանց կրօնն ու դաւանութիւնը և ամեն մի գաղութ ունի իր աղօթատունն ու ծխական քահանան, հոգևոր օրինակատարութիւնների համար։

Մերվում ապրող հայերը հաշվում են մօտաւորապէս 400 ծուխ։ Սրանք ունեն իրանց աղօթատունը, երկու ծխական քահանաներ, որոնք հովւում են և մերձակայ կայարաններում ապրող հայ ծխերը և ծխական երկսեռ դպրոցի չորս ուսուցիչներով։ Տեղիս բնակիչները, որոնք անջատված իրանց բուն հայրենիքից և կարօտ են հոգևոր սնունդի, առատ վարձատրում են ծխական քահանաներին։ Վերջիններիս եկամուտը հասնում է տարեկան առնուազը 2,000 ր., ի բաց առեալ տարեկան 700 ր. դասավճարը, որ ստանում են ծխական դպրոցի վարչութիւնից։ Ահա թէ ինչու կարճ ժամանակամիջոցում քահանան կարողանում է նիւթապէս ապահովել իրան։

Վեհափառ Հայրապետի մահվան բօթը երէկ, ամսիս 12-ին, ինչպէս կայծակի արագութեամբ հասել է աշխարհիս ամեն մի ծայրը, նոյնպէս և Աստրախանի կօնսիստօրիան էլ հեռագրով հաղորդել էր Պօղոսեան քահանային, ինչպէս գործակալի, պատուիրելով հոգեհանգիստ կատարել հանգուցեալ Կաթողիկոսի համար։ Ամսիս 13-ին հոգեհանգիստ կատարվեց. արձակվեցին ծխական դպրոցի աշակերտները։ Անցորդ

—

Թօվուզ կայարան, 16 դեկտեմբերի

Թօվուզ կայարանի շրջակայ գիւղերում երևաց մարախ։ Թէպէտ ներկայումս դեռ սաղմնային դրութեան մէջ է, բայց գիւղացիք երկիւղի մէջ են անկոչ հիւրի այցելութեան պատճառով։ Սրա համար անհրաժեշտ է ժամանակին զինվել դեռ ևս անզօր թշնամու դէմ, որպէսզի ժամանակ չը տալ նրան բազմանալու։

Պէտք է կռիւ մղել վտանգաւոր միջատի դէմ այժմվանից, որպէսզի ապագայում ապահով լինենք անհաճոյ հիւրի քայքայիչ արշաւանքներից։ Եթէ այժմեանից ուշադրութիւն չը դարձվի թշնամու վրա, որը դեռ ևս աննշան դերումն է, այդ դէպքում մենք նրան ժամանակ կը տանք ապագայում աւելի բազմանալու և թեւաւորվելու։ Այն ժամանակ գիւղացիների համեստ ցանքատները կը փոխարկվեն անհաշվելի բազմութեան լաց ու կոծի։ Գիւղացիների տնտեսական կեանքը թունաւորող յաջող կռիւ մղելու համար, պէտք է այժմվանից յուժկու միջոցներով զինվել նրա դէմ, որպէսզի կանգնեցնենք նրան կէս ճանապարհին և այդպիսով միջոց չը տանք, որ ապագայում գիւղացու արիւն քրտինքով ձեռք բերած բարիքը զոհ դառնայ անխնայ թշնամու առատ հունձ անելու համար։

Այժմեանից պէտք է զինվել թշնամու դէմ մանաւանդ այն պատճառով, որ մեր շրջանում շատ վաղ է սկսում գարնանային տաքութիւնը, որը նպաստում է դեռ ևս կատարելապէս չը կազմակերպված արարած թշնամու կենդանանալուն։ Ահա այդ ժամանակ միայն բացվում է մի անհոլի սրտապատառ տեսարան տարաբաղդ գիւղացիների առաջ, որոնք միայն անզօր և յուսահատված ականատեսներ են հանդիսանում։

Սրտապատառ տեսարան տարաբաղդ գիւղացիների առաջ, որոնք միայն անզօր և յուսահատված ականատեսներ են հանդիսանում թշնամու սարսափելի արշաւանքների, թշնամու, թէև ըստ երևոյթին ոչ այնքան ահարկու, բայց ճակատ կորստաբեր գիւ-

ղացու տնտեսական կեանքին հասցրած մահաբեր հարուածներով։ Այնուհետև գիւղացիները միայն դառնութեամբ սրտի ողբում են իրանց արիւնով սնուցած ցանքսերը՝ արտասուքներով ողողված դաշտերում։
Ն. Գ.

—

Ախալքալաք, 14 դեկտեմբերի

Ախալքալաքի հայ հասարակութիւնը հանգուցեալ Կաթողիկոսի թաղմանը ներկայ լինելու համար իր կողմից այսօր, որպէս ներկայացուցիչ ընտրեց Գէորգեան ճեմարանի ուսուցիչներից Ստ. Կանայեանին, որոշելով պսակ դնելու փոխարէն՝ հանգուցեալի անունով գր.-ընթերցարան բաց անել տեղիս հայոց ծխ. դպրոցին կից։

Կիրակի, ամսիս 19-ին, Վեհափառի թաղման օրը, կատարվելիք հոգեհանգստին պաշտօնապէս ներկայ էր տեղիս մահմեդական հոգևորականութիւնը Վ. Հ.

—

Ցարսկիէ-Կոլօդցի, 15 դեկտեմբերի

Անցեալները հաղորդել էինք, որ հասարակութիւնը հեռագիր ուղարկեց Էջմիածնի սինօդին, խնդրելով ձեռնադրել իրանց քահանայացուին մինչև Ջրօրհնէք։ Սինօդը ոչ միայն չը կատարեց հասարակութեան խնդիրը, այլ արհամարհեց պատասխան անգամ տալ ժողովրդի ձայնին։ Սինօդը պահպանում է խորհրդաւոր լռութիւն։ Եւ այսպէս հասարակութիւնը դարձեալ ստիպված կը լինի Ջրօրհնէքին քահանայ բերել հեռու տեղից, վճարելով նրան մեծ ճանապարհածախս։ Սինօդի ցոյց տուած արհամարհանքի պատճառով ժողովուրդը շատ է յուզված։

Հինգշաբթի գիշերը գողերը մտնում են մի թուրք կլէկչու խանութ և տանում են 400 ռ. փող, 800 րուբլու մուրհակներ և 400 րուբլու խնայողական գանձարանի տետրակը։ N. N.

—

(Սեփական թղթակցից)

Էջմիածին, 20 դեկտեմբերի

Կաթողիկոսի թաղումը, ինչպէս հեռագրեցի, վերջացաւ երէկ, ժամը 1-ին։ Շրջակայ քաղաքներից և գիւղերից եկած ժողովրդի անագին բազմութիւնը սկսեց ցրվել. մնացին միայն պատգամաւորները և բարձրաստիճան հիւրերը, որոնք և հրաւիրվեցին վանքի մեծ սեղանատունը ճաշի՝ ժամը 3-ին։

Նախօրդ օրը ընտրվել էր պատգամաւորների միջից մի կարգադիր մասնաժողով, որի անդամներն էին Կ. Խատիսեան, Հ. Առաքելեան, Հայկ Տէր-Միքայէլեան, Արսէն Բալայեան, Ն. Կաճկաճեան, Բ. Տէր-Սարգսեան։ Այդ մասնաժողովը, Էջմիածնի վանքի կողմից կարգադիրներ նշանակված Բաբգէն և Ներսէս վարդապետների հետ միասին որոշել էր սեղանի ամբողջ կարգապահութիւնն ու կազմակերպութիւնը և հնարաւոր էր գտել տեղ տալ 170 հոգու, ամենքն էլ պատգամաւոր և պատուաւոր հիւրեր։ Սեղանի կարգը և կազմակերպութիւնը շատ գեղեցիկ էր։ Սեղանի գլխին նստած էր տեղապահ Սուրէնեան սրբազանը, աջ կողմին՝ սենատոր Վատացին, ձախ կողմին՝ էկզարխի ներկայացուցիչը. ապա արքեպիսկոպոսները, թեմական առաջնորդները, նահանգապետը, պաշտօնեաներ, ռուս, վրացի, թուրք հասարակութեան ներկայացուցիչներ, քաղաքագլուխներ և հայ պատգամաւորներ, մէջ ընդ մէջ ունենալով վարդապետներ և քահանաներ։

Կաթողիկոսական գահը, սև շղարշով պատած, դրված էր այն ամպհովանու մէջ, ուր սովորաբար նստում են կաթողիկոսները, նախագահելով միաբանական սեղանին։

Տեղապահի կողքին ոտքի կանգնած էր Կ. Խատիսեան, որ պէտք է կատարէր թարգմանի պաշտօնը։

Ճաշը սկսվեց տեղապահի աղօթքով։

Առաջին կերակուրից յետոյ տեղապահ Գէորգ արքեպիսկոպոսը ոտքի կանգնեց և մի ճառ արտասանեց (որ յետոյ Կ. Խատիսեան թարգմանեց ռուսերէն)։ Նա արտայայտեց այն միտքը, որ «մի տարի առաջ այս սեղանատան մէջ ուրախութեան ճաշ էր, երբ օծվում էր հայոց նորընտիր Կաթողիկոսը. այսօր սուգ է, սուգ համայն հայ եկեղեցու և ազգի համար, որովհետև նրա ընտրեալը այլ ևս չը կայ։ Մահը խլեց Նրան այն րօպէին, երբ Նա անագին ծրագիրներ ունէր և ամենամեծ եռանդ՝ գործելու յօգուտ և ի շինութիւն եկեղեցու և ազգի։ Մաղթենք փրկութիւն և հանգիստ Նրա հոգուն, մաղթենք, որ Գրիգոր Լուսաւորչի Աստուածը արժանաւոր յաջորդ կանգնեցնէ նրան»։

Ամենքը յոտնկայս՝ երկիւղածութեամբ և վշտով համակված շրթունքներին տարին հոգու թասը։

Դրանից յետոյ նորից վեր կացաւ տեղապահը և ասաց.

«Պատմութիւնից գիտենք, որ մեր Մայր Աթոռը շատ անտանելի նեղութիւններ է կրել. եղել են րօպէներ, երբ Էջմիածնի միաբանութիւնը նոյնիսկ չէ կարողացել շուքով և փառքով օծել կամ թաղել իր Կաթողիկոսին։ Բայց մօտ 100 տարի է, որ Հայոց Եկեղեցին մտաւ Ռուսաց Մեծազօր Կայսրի բարձր հովանաւորութեան ներքոյ և սկսեց բարգաւաճել շնորհիւ կայսերական խնամքի և շնորհաց. մենք ամենայն ազատութիւն ունենք կառավարել մեր եկեղեցին, պահպանել մեր դպրոցները, մեր ազգային հաստատութիւնները։ Եւ այն մեծ ուշադրութիւնը, որ մեր Մեծազօր Կայսրի ներկայացուցիչը՝ Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը և Կայսերական կառավարութեան այլ ներկայացուցիչները ցոյց են տալիս մեր եկեղեցուն սուգի և վշտի այս ծանր րօպէներում, մեծ մխիթարութիւն և սփոփանք են պատճառում մեզ։ Ուստի նուիրական պարտք եմ համարում Հայոց Եկեղեցու և ժողովրդի անունով օրհնել Նիկոլայ Բ. Կայսրին, մեր եկեղեցու մեծազօր Հովանաւորին, Կայսրուհուն, Մայր Կայսրուհուն, Թագաժառանգին, և երկարակեցութիւն ու երջանկութիւն մաղթել»։

Բոլոր հանդիսականները լուռ երկիւղածութեամբ լսեցին այս ճառը։

Ապա տեղապահը օրհնեց Կովկասի Փոխարքային և ամուսնուն, թւելով Փոխարքայի արած բարիքները հայ ժողովրդին, շնորհակալութիւն յայտնեց Վրաստանի էկզարխ Իննոկէնտի արքեպիսկոպոսին, որ բարեհաճել է ոչ միայն հեռագրով ցաւակցութիւն յայտնել, այլ և ուղարկել իր ներկայացուցիչներին, օրհնեց սենատոր Վատացին, նահանգապետ կոմս Տիզէնհաուզէնին, գեն.-մայոր Լազարեանին, օտարազգի ներկայացուցիչներին և բոլոր պատգամաւորներին։ Առանձնապէս օրհնեց Թիւրքիայի և Պարսկաստանի հայ ժողովուրդներին, որոնք առանձին ներկայացուցիչներ են ուղարկել։ Այս բոլոր օրհնութեան ճառերը թարգմանում էր ռուսերէն Կ. Խատիսեանը։

Առաջին պատասխան-ճառը արտասանեց էկզարխի ներկայացուցիչ Գրիգորի եպիսկոպոսը. «Ընդհանրական առաքելական եկեղեցին,—ասաց նա,—միշտ ձգտել է դէպի միութիւն բոլոր եկեղեցիների։ Իվերական հնագոյն և առաքելական եկեղեցու պետ արքեպիսկոպոս Իննոկէնտին երբ իմացաւ մի այլ հնագոյն և առաքելական եկեղեցու պետ՝ հայ-լուսաւորչական եկեղեցու Ծայրագոյն Պատրիարք Մատթէոս Բ-ի վախճանի ցաւալի լուրը, իսկոյն ցաւակցական հեռագիր ուղարկեց և ինձ ևս հրամայեց Պիմէն և Անտոնի վարդապետների հետ միասին գալ և լինել նրա ներկայացուցիչները ս. Էջմիածնի այս հնագոյն աթոռում, որի հիմնադրի՝ Գրիգոր Լուսաւորչի յիշատակը հաւասարապէս յարգում է մեր ուղղափառ եկեղեցին։ Թող լինի եղբայրական խաղաղութիւն երկու քոյր եկեղեցիների մէջ. Քրիստոս մեր մէջ է և մեզ հետ»։

Դրանից յետոյ սենատոր Վատացին նորից ցաւակցութիւն յայտնեց Փոխարքայի, Կայսերական կառավարութեան և իր կողմից, ընդգծելով հանգուցեալ Կաթողիկոսի լօյալ, օրինապահ և ուղղամիտ ուղղութիւնը։

Ճաշը վերջացաւ ժամը 6-ին։

—

Երեկոյեան ժամը 7-ին, ճեմարանի մատենադարանի մէջ կայացաւ պատգամաւորների խորհրդակցութիւն։ Պատգամաւորներից շատերը դէմ էին գումարելու որևէ ժողով, իմանալով, որ որոշ խմբակ դիտաւորութիւն ունի հրահրել կրքերը, բայց այնու ամենայնիւ ժողովը կայացաւ, որ և ընդունեց պայթակցալից կերպարանք, թէև վերջ ի վերջոյ ունեցաւ աննպաստ արդիւնք թելադրողների համար։

Այդ մասին վաղը։ Հ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

—

Մեր երկրի կուլտուրական առաջադիմութեան հետ կարելի է ծանօթանալ նաև ցուցահանդէսների միջոցով։ Ցուցահանդէսները այդ առաջադիմութեան պատկերն են ներկայացնում։ Այնտեղ, իբրև հայելու մէջ, րէլիէֆ, պարզ կերպով արտայայտվում է, թէ երկիրը ինչ առաջադիմութիւն է արել զանազան արհեստների, գիւղատնտեսական այլ և այլ ճիւղերի, տեխնիկայի, երկրի արդիւնաբերութեան և այլ բաների մէջ։ Այնտեղ ի ցոյց դրած իրերով է, որ մարդ գաղափար է կազմում այդ առաջադիմութեան մասին։ Որպէս զի աւելի ճիշդ գաղափար կազմվի երկրի առաջադիմութեան և բնական հարստութեան մասին, հարկաւոր է, որ ցուցահանդէսներում շատ լինի էքսպօնանտների թիւը, այսինքն բազմաթիւ ներկայացուցիչներ լինեն այնտեղ իրանց արդիւնաբերութեամբ և այլն։

Որքան հարուստ լինի կազմված ցուցահանդէսը, այնքան կատարեալ կը լինի մեր կազմած գաղափարը երկրի մասին։ Ցուցահանդէսները, բացի ընդհանուր բնոյթ կրելուց, կարող են լինել և մասնաւոր, այսինքն այնպիսիք, որտեղ ի ցոյց են դրվում մի որոշ ճիւղի վերաբերեալ բաներ, այդպէս, օրինակ, ցուցահանդէսները կարող են լինել զուտ թռչնաբուծական, մեղուաբուծական, պտղաբուծական, և այլն։ Այցելողները ցուցահանդէսներում աչքի անցկացնելով ներկայացված իրերը կամ գործերը և համեմատելով նրանց միմեանց հետ, պարզ նկատում են մէկի առաւելութիւնը միւսից, ուստի իւրացնում են աւելի կատարելագործվածը։ Ցուցահանդէսներում իւրացնում են ոչ միայն հասարակ այցելուները, այլ և նոյն իսկ արդիւնաբերողները մէկը միւսից։

Եթէ այցելողներից որ և իցէ մէկը մի բան չէ հասկանում, նա կարող է դիմել ցուցահանդէսի վարչութեան կողմից նշանակված մասնագէտներին, որոնց պարտքն է իսկոյն բաւարարութիւն տալ իւրաքանչիւր իրանց դիմողի հարցասիրութեանը։ Ցուցահանդէսները ամենալաւ միջոցն են ժողովրդի մէջ գիտելիքներ, օգտաւէտ տեղեկութիւններ տարածելու և այն, ինչ տասնեակ բրօշիւրներով, խօսքերով դուք չէք կարող համոզել ժողովրդին ձեր ասածների օգտաւէտութեան մէջ, ցուցահանդէսների միջոցով ամենաարագ և ամենահեշտ կերպով դուք կարողանում էք կատարել և այդ այն պարզ պատճառով, որ այնտեղ ամեն ինչ կօնկրետ, պարզ կերպով է բացատրվում, օրինակների վրա հասկացվում։ Ցուցահանդէսների տուած օգուտը անուրանալի է, որը անշուշտ իւրաքանչիւր այցելու հէնց ինքը իր վրա փորձած կը լինի։ Այդպէս լինելուց յետոյ պիտի ցանկալ, որ մեր հասարակութիւնը շատ սիրով և մեծ թւով յաճախէ ամեն տեսակ ցուցահանդէսներ,

Սակայն ինչ ենք մենք տեսնում։ Ցուցահանդէսները մեծ մասամբ այցելում են օտարները, մերոնք ամենաչնչին տոկոսն են կազմում նրանց հետ համեմատած և գլխաւորապէս կարծես թէ այցելում են զուարճանալու մտքով։ Մինչդեռ նրա վրա պէտք է նայել իբրև ամենալաւ դպրոցի վրա, որտեղից ամեն տեսակ գիտութիւն է տարածվում ժողովրդի մէջ։

Կրկնում եմ, մեզնման յետամնաց ժողովրդին առաւել ևս հարկաւոր է այցելել ցուցահանդէսները, որովհետև ամեն բանում չափազանց յետ ենք մնացել օտարներից, ուստի մեծ կարիք ունենք սովորելու։ Այս համոզմունքին ենք գալիս, այցելելով ցուցահանդէսները։ Թող ներվի մեզ ասել, որ մենք ամենատարրական բաները չը գիտենք. և անշուշտ կը ծիծաղի ընթերցողը, եթէ ասելու լինեմ, որ օրինակ՝ մենք հաւ մորթել, նրան փետրել և առհասարակ թռչուններ կերակրել չը գիտենք, այս հասարակ բանը չը գիտենք։ Ես այս բանում համոզվեցի, երբ ամիս ու կէս առաջ այցելելով Թիֆլիսում թռչնաբուծական ցուցահանդէսը, լսեցի այնտեղ ինստրուկտօրից վերոյիշեալ հարցերի մասին բացատրութիւններ և մեծ եղաւ միանգամայն զարմանքս, երբ նկատեցի, որ այս բանում էլ եւրօպացին կատարելագործութիւն է մտցնել։

Մինչդեռ եւրօպացին մորթում է թռչունը առանց գլուխը կտրելու, փետրում է առանց եռացրած ջրի մէջ գցելու և փորոտիքն է դուրս տալիս առանց փորը պատռելու, մերոնք ընդհակառակն են անում, և այս ամենը եւրօպացին անում է այնքան վարպետօրէն, որ մնում են շուարված։ Զը կարծէք թէ այս ամենը անում է առանց հիմնաւոր պատճառի։ Ոչ, առանց պատճառի նա մի քայլ չէ անում։ Հիմքը կազմում է առևտրական շահը։ Նա իր բոլոր արածները յարմարեցնում է շուկայի պահանջներին և ճաշակին։ Ներկայ դէպքում, եթէ նա հաւի վիզը չէ կտրում ոտքի տակը դնելով հաւին, այդ նրա համար է, որ հաւը մորթելիս ոտների տակին կապտում է և այլանդակվում. իսկ այդպիսին շուկայում չէ ընդունվում. նա վերցնում է սուր և բարակ դանակ և ձեռքին բռնած կոկորդի միջով կտրում է միայն արեան երակը. եթէ նա մորթած հաւը չէ գցում եռացրած ջրի մէջ և յետոյ փետրում, որովհետև թէ փետուրներն են փչանում, որոնք փող արժեն և երկրորդ՝ թէ կաշուի գոյնն է փոխվում և թէ կարող է մորթին քերթվել, որը նոյնպէս վնաս է. եթէ փորոտիքը դուրս է տալիս առանց փորը պատռելու, դա նրա համար է, որ հաւը չայլանդակվի և երկրորդ՝ աւելորդ ժամանակ չը կորցնի. նա վարպետօրէն մատը յետոյ մասով մտցնում է ներսը և մի ակնթարթում ամբողջ փորոտիքը դուրս շպրտում։ Ինչ վերաբերում է թռչուններ չաղացնելուն, նրանք մեզ նման շաբաթներով և ամիսներով չեն կերակրում, այն էլ կուշտ տալով, այլ կերակրում են 10—14 օր, կերակրելով ոչ թէ հատիկներով, այլ տալով ջրալի կերակուր, որը ներս է տանվում թռչնի փուչիկը առանձին գործիքով։ Այդ գործիքով օրական կարելի է կերակրել 5—800 թռչուն և 2 շաբաթվայ ընթացքում նա աւելանում է 2—3 ֆունտ, մի հանգամանք, որը աչքի առաջ պիտի ունենան մեր հաւավաճառները։

Մենք օրինակ բերինք այս ըստ երևոյթին երկու հասարակ օրինակները, պարզ ապացուցելու համար, թէ իրօք որքան տգէտ ենք ամենատարրական բաներում։ Ցուցահանդէսներ այցելողների համար անագին ասպարէզ է բացվում նորանոր գործունէութեան համար։ Աչքիմ, խելօք, հետաքրքիր և ձեռնարկող ոգի ունեցող այցելուն իսկոյն կըմբռնէ, թէ ինչը օգտաւէտ է իւրացնել և կեանքում գործադրել։ Ցուցահանդէսների օգտակարութիւնն ի նկատի ունենալով մենք հայ հասարակութեան ուշադրութիւնն ենք հրաւիրում դէպի նրան, հաստատ համոզված լինելով, որ տուած մի քանի կոպէկների փոխարէն կը շահվին հարիւր անգամ աւելի։

Ամսիս 15-ից բացվել է Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկ. շինութեան մէջ մեղուաբուծական ցուցահանդէս. Թող ուրեմն օգտվի հասարակութիւնը առիթից և այցելի մեծ թւով այնտեղ։

Ա. Դաւթեան

ՕՐՎԱՅ ՑԱՒԵՐԻՑ

—

Տենդոտ զգացմունք, թէ ցուրտ բանավարութիւն։

Եթէ ուզում ես շարժել ամբոխը, յուզել այդ անագին զանգուածը՝ ձեռք բերելու համար ցանկացածդ արդիւնքը՝—տենդոտ զգացմունքը, կրակոտ խօսքը, բուռն շարժումները անհեղ բացարձակութիւնները քեզ զօրավիգն կը լինեն աջողութեան. բայց այդ աջողութիւնը տևական չէ. մի մրրիկ է, կանցնի. և աւերը աւելի շատ է լինում, քան բերած օգուտը։

Ապա թէ ցանկանում ես մի տևական արդիւնք, առողջ համոզմունքի և շրջանկատ, կշռադատութեան բարերար արգասիք—սխալմունքներից աւելի ազատ, անթերութիւնից զերծ, տևական և հաստատուն՝—գործի հրաւիրիր ցուրտ բանավարութիւնը, հանդարտ համոզկերութիւնը, որ հալեցնէ ու կաթեցնէ օգտաբեր խօսքը՝ լսողի ականջը։ Այդպէս շինածը չի լինիլ աւազի վրա դրված ու մրրիկներին խաղալիք։

—

Կիրքը, եռուն զեռուն զգացմունքը—վաղվաղկոտ և յախուռնօրէն ձեռնամուխ—աւելի խախտող ու քանդող է, քան շինող ու հաստատող։

Տեհուն ու ծանրաբարոյ և իսկապէս արդիւնագործող մարդը կրքի բուռն թափից հեռու է։ Ալիքներն այդ ժայռը դանդաղօրէն կրծեն էլ, խորտակել փշրել—այն էլ միանգամից—կարող չեն։

—

Ուղիղ իշխանավարելու և հնարաւորութեան չափ անսխալ գործելու ձգտողը մէկ ու միւս ականջին խօսող խորհրդականներ և յուշարարներ պիտի ունենայ։

Վաղարշակ թագաւորը, այն՝ որ կարգեց, կարգաւորեց, հաստատեց, ամրացրեց և բարեզարդեց հայկեան տունը և ապահովեց նրա սահմանները, իր այդ բարեկարգութիւնների թւում և այս մէկը չը մոռացաւ. նա իր այս ու այն թևից մարդիկ կարգեց՝ որ գրով, ու բանիւ էլ անշուշտ յուշարար լինեին իրան։ Մէկը նրանցից պիտի նրան յիշեցնէր շուրջը կատարված բարին. միւսը պիտի յիշեցնէր անելիք վրէժխնդրութիւնը։ Բարին յիշեցնողին պարտք դրեց, որ եթէ արքան բարկանայ ու անիրաւ հրաման արձակէ, նա արքային յիշեցնէ «զիրաւն և զմարդասիրելն»։

Այդպիսի թագաւորը կրքոտվելուց ու իր անձին ու հասարակաց գործին վնաս տալուց շատ հեռու կը լինէր։

—

Գովելու ու ջատագովելու ես վեր կացել՝ թէ դատելու ու դատապարտելու, կարծիքն ու լուրը քեզ հիմք մի աներ. այլ անձամբ, ուշիուշով, վերահասու լինել, առաւել և ապա ըստ այնմ պարտ ու պատշաճն անել. այդ է արդար ուղին։ Եւ այդ միայն հաւատարժանն, և այդ է միայն ընդունելին։

Իսկապէ՞ս նախանձախնդիր ես հասարակաց բարուն, թէ միայն ձևանում ես։

Եթէ իսկապէս նախանձախնդիր ես, և միևնոյն ժամանակ լուսամիտ և արդարակորով մարդ, ապա դատաստանիդ մէջ՝ դու վերոգրեալ կանոնից դուրս չես գալ։

Ա՜, եթէ ձևանում ես, հասկանալի է վաղվաղելդ ու դիմացինի վրա քարեր շպրտելդ։

—

Ցաւալին ամբոխն է, պարզամիտ ու դիւրահաւատ ամբոխը, որին բաւական է ասել՝ մէկին քարկոծել տալու համար՝—եղբայրներ, սա՝ այս մարդը՝ մեր հաւատն հայհոյեց. մեր սիրելի ու պաշտելի մարգարէին անարգեց.

Եւ ահա մի կենդանի և կենսունակ և պիտանի մարդ ողջ-ողջ թաղված մի քարակարկառի տակ։

Ո՜հ, զգուշացէք ամբոխին «Խաչեսցի» աղաղակն արձակել տալուց։

—

Աստուած իմ, ո՜րպիսիք են յաճախ խաչուողները։ Ա. Մ. Եղեկեան

ՆՈՐ ԼՈՒՐԵՐ

—

◆ Այսօր, դեկտեմբերի 23-ին, տեղի կունենայ Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան ընդհանուր ժողովը, որին կարող են ներկայ լինել բոլոր ցանկացողները։ Նիստը կը սկսվի յարգանք յայտնելով հանգուցեալ Վեհափառ Կաթողիկոսի յիշատակին։ Այնուհետև կը զեկուցվեն ընթացիկ կարևոր գործեր և կը յիշվեն նոր նուիրատուութիւնների մասին։ Գիւղատնտես Տարանինովը կը զեկուցի բամբակագործութեան արդի վիճակի և կարիքների մասին Անդրկովկասում։ Մալխասեան կը կարդայ զեկուցում Նոր-Աւան կոչված կալուածքում արված բամբակագործական փորձի մասին։ Սկիզբն է 7 ժամին երեկոյեան։

◆ Երեքշաբթի, դեկտեմբերի 21-ին, Արքունական թատրոնում տեղի ունեցաւ վրաց բեմի յայտնի դերասան Կօտէ Մեսխիի XXX-ամեայ բեմական գործ. յոբելեանի հանդիսաւոր տօնումը։ Մանրամասնութիւնները կը տանք հետևեալ անգամ։

◆ Երէկվանից արձակվեցին առաջիկայ տօների առիթով Թիֆլիսի բոլոր միջնակարգ կրթական հաստատութիւնների սաները։

◆ Լազարեան ճեմարանում ևս դեկտ. 14-ին կատարվել է հոգեհանգիստ Ամենայն Հայոց հանգուցեալ Կաթողիկոսի յիշատակին։ Ներկայ են եղել բոլոր աշակերտները, պրօֆեսօրները և վերատեսուչ Միլլէրը։

◆ Գրօզնայի քաղաքային ինքնավարութեան Կովկասի Փոխարքան թոյլ է տուել կնքել 600,000 րուբլու փոխառութիւն։

◆ Նովօչերկասկից հաղորդում են, որ «Դաշնակցութիւն» կուսակցութեանը պատկանելու մէջ մեղադրվող անձանց մեղադրական ակտի ընթերցումն արդէն աւարտվել է. շուտով կաւարտվի նաև Թիֆլիսում։

◆ Թիֆլիսում հրատարակվող «Новая Рѣчь»-ում բժիշկ Ե. Մ.-ն, խօսելով թոքախտաւորների համար Աբաստումանում սանատօրիա հիմնելու խնդրի մեծ նշանակութեան մասին, իր կողմից նպատակայարմար և րացիօնալ է գտնում, որպէս զի սանատօրիաները հիմնվեն մասնաւոր միջոցներով և ոչ թէ թոքախտի դէմ մաքառող կովկասեան ընկերութեան ձեռքով միայն։ Մասնաւոր նախաձեռնութիւնը մինչև օրս արգելքի էր հանդիպում, որովհետև Աբաստումանում ոչ ոքի հողաբաժին չէ տրվում շինութիւնների համար։ Յօդուածագրի կարծիքով, յիշեալ ընկերութիւնը պէտք է մի քանի հողաբաժիններ ձեռք բերէ Աբաստումանում և մրցութեան ձևով տայ նրանց որոշ պայմաններով մասնաւոր անհատների, բժիշկների կամ ակցիօներական ընկերութիւնների մասնաւորապէս սանատօրիաների համար և մշտապէս հսկելով նրանց վրա։

◆ Ժողովրդական համալսարանների ընկերութեան վարչութիւնը, իր միջոցների սղութեան պատճառով, որոշեց փակել իր դպրոցները և վերաբանալ՝ եթէ միջոցներ կը ստացվեն։

◆ Դեկտեմբերի 26-ին Սպիրիտոնին Ժողովրդական Տանը կը դասախօսէ Յունաստանի պատմութեան մասին։

◆ Այսօր Ժողովրդական Տանը, հայ թատերասէրների խումբը կը ներկայացնէ «Ոճրագործի ընտանիք» պիէսը, որ յետաձգվեց հանգուցեալ Կաթողիկոսի մահվան պատճառով։

◆ Կ. Հ. Բ. Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի շարունակութիւնը տեղի կունենայ դեկտ. 27-ին։

◆ Թիֆլիսի մսավաճառները դարձեալ դժգոհութիւն են յայտնում թէ քաղաքի կողմից հաստատված մսի սակագինը իրանց համար չափազանց անձեռնտու է, ուստի խնդրում են աւելացնել մսի գները մի կոպէկով։ Այս միջնորդութիւնը կը քննվի այսօր քաղաքային տնտեսական մասնաժողովի մէջ։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատեց մսի հետևեալ սակագինը. տաւարի մսի ֆունտը 12 կ. (սուկին սակագնից դուրս է), ոչխարի մսի ֆունտը 14 կ., գոմէշինը՝ 8 կ., խոզի մսի ֆունտը առանց կաշուի 14 կ., կաշուով 13 կ.։

◆ Ամեն օր համարեա քաղաքային սանիտարական խմբերը շրջում են գլխաւոր շուկաները և հսկում մթերքների վրա։

◆ Տեղական մամուլի մի քանի օրգաններ, շարունակ լուրեր, տեղեկութիւններ քաղելով «Մշակից», չեն յիշում աղբիւրը։ Մոսկվայում վախճանված Ժամհարեանի 250,000 ր. խոշոր կտակի մասին լուրը հաղորդել է «Մշակը», ստանալով յատուկ հեռագիր։ Ուրիշ ոչ մի թերթ չէ ունեցել այդ լուրը։ Հայ «Կայծեր» թերթը սպելով այդ լուրը, ամենևին հարկ չէ տեսել հաղորդել աղբիւրը, մինչ երբ լուրեր է քաղում մի՞ուրիշ թերթից, հարկ է համարում յիշել աղբիւրը։ Այս գիծը, բնորոշ է։

◆ Ալէքսանդրեան այգում, Կովկասեան Գիւղատնտեսական շինութեան մէջ բացված մեղուաբուծութեան ցուցահանդէսում, որ ամենայն օր ունենում է մեծ թւով այցելուներ, անպատճառ մեղր կը վաճառվի դեկտ. 26 ից։

◆ Եկող տարվայ մարտ ամսին մտադրութիւն կայ տօնել վրաց գրող Եկատերինա Գաբաշվիլի յոբելեանը։

◆ Վրաց հոգևորական համագումարը Թիֆլիսում վերջացնելով իր պարապմունքները, ընտրեց մի մասնաժողով վրաց հին սեմինարիայի շինութեան շահագործման հարցով զբաղվելու համար։ Մարմնամարզութիւն, նկարչութիւն և երաժշտութիւն դասաւանդելու հարցի նկատմամբ համագումարը որոշեց ռուսաց սինօդից խնդրել յատկացնել դրանց համար հարկաւոր գումարները, որովհետև հոգևորականութիւնը միջոցներ չունի։ Թոյլ աշակերտների համար դասարաններից դուրս պարապմունքներ սահմանելու խնդրի վերաբերմամբ համագումարը կայացրեց բացասական որոշում դրամների բացակայութեան պատճառով։

◆ Կովկասի Փոխարքան թոյլ տուեց խաղալ Կովկասի բեմերի վրա վրացերէն՝ Գ. Ֆօցխովէլիի «Կեանքի տղմի մէջ» 4 գործ. պիէսը։

◆ Սեդրակ Նազարեան անունով մի մարդ զուրկ լինելով աշխատանքից, խնդրում է անզաւակ մարդկանցից որդեգրել իր 9 տարեկան Աշոտ որդուն։ Ապրում են Սամանեայա հրապարակի վրա՝ Պէսկեւմ, Ալիագովի քարվանսարայում, № 3։

◆ Նոր-Նախիջեւանից մեզ գրում են. «Պետական խորհրդական Ալ. Վաս. Պետրովը ամսիս 11-ին հասաւ տեղս, իսկ 12-ին այցելեց մեր յաջորդ Մուշէ վարդապետին, եկեղեցական հոգաբարձութեան անկելանոցին ու որբանոցը և Ս. Խաչ վանքը։ Շտապեց Էջմիածին Հայրապետի թաղմանը ներկայ լինելու համար։ Կովկասում հայոց եկե-

ջեցու վիճակն ուսումնասիրելուց յետոյ կրկին պիտի վերադառնայ Նոր-Նախիջևան: Նա արդէն եղել է Բիշինէվ և Ղրիմի քաղաքները:

◆ Մօզդօկից մեզ գրում են. «Դեկտեմբերի 12-ին տեղումս բացվեց Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութեան Մօզդօկի «Հայրիկեան» գրադ.-ընթերցարանը: Նոյն օրը տեղիս ճիւղի վարչութեան ձեռներէցութեամբ եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ կաթողիկոս Հայրիկի համար, որի յիշատակին նուիրված է գրադ.-ընթերցարան: Գրադ.-ընթերցարանի բացման ժամանակ Կար. Նաւասարդեանը խոստացաւ 100 ր. ընկերութեան օգտին, Կ. Շլթեան նուիրեց 100 հատոր գրքեր փաստակամ:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Անյայտացել է և որոնվում է Նինա Բակրաձէն, 20 տարեկան:

◆ Ոստիկանապետը կարգադրել է ոստիկանական պաշտօնեաներին կանգնել ճանապարհների և շուկաների վրա և հսկել, որ միջնորդները գիւղացիների ձեռքից էժան գներով չը գնեն գիւղերից բերած մթերքները և ապա թանգ-թանգ վաճառեն շուկաներում:

◆ Այս դեկտեմբերի սկզբից ոստիկանական անդամների ուշադրութիւնը գրաւեց մի երիտասարդ, որ, ապրելով Գօլովինսկի պրօսպեկտի վրա՝ «Եւրոպական հիւրանոցում», և չունէր ոչ մի ծառայութիւն, ոչ մի դրամ չէր ստանում բանկերից, բայց միևնոյն ժամանակ ապրում էր շատ փառաւոր կերպով, ծախսելով խոշոր գումարներ: Պարզվեց, որ երիտասարդը նուխեցի հարուստ Յովհաննէս Նաւասարդեանի որդի Սերգէյ Նաւասարդեանն է, որ հօր վկայականները և մուրհակները կեղծելով փողեր է ուզելիս եղել սրանից-նրանից: Այսպէս, նրա զոհեր եղան եղբ. Փարսադանեանները՝ 500 ր., Ջիլինգարեանները՝ 1600 ր., և ուրիշները: Նաւասարդեանը ուղարկված է քննիչի մօտ:

◆ Պատասխանատուութեան է ենթարկվում «Մօդերն» թատրօնում ներկայացումներ տուող Կօնօ Նազիրեանը, հարբած ժամանակ յիշեալ թատրօնում անկարգութիւններ անելու համար:

◆ Դեկտ. 21-ին, երեկ. ժ. 7-ին, երկաթուղային դպրոցի աշակերտ Գրիգորի Զամկովը, 12 տարեկան, պատահմամբ դանակով թեթև վէրք հասցրեց գիմնազիայի աշակերտ Վլադիմիր Անտօնովին՝ 15 տարեկան:

◆ Նոյն օրը, առ. ժ. 5-ին, Անդրէյ Կօրնէևը ինքնասպանութեան նպատակով ելնելով պատշգամբը՝ գրպանի դանակով վէրք հասցրեց իրան փորից: Վիրաւորվածին տարան հիւանդանոց:

◆ Դեկտ. 21-ին Ցարութիւնեանի պանդոկից՝ Սամուկինսկի արուարձանում, անյայտ անձեր յափշտակել են Նակով Ջիլինգարովի 10 խոզերը, 170 րուբլի արժողութեամբ:

◆ Դեկտ. 21-ին Սերգէյ Անդրոսովը, որ ապրում է Ալագիրսկի փողոցում, յայտնեց ոստիկանութեան, որ իր տնատէր Բենիամին Դմիտրովէցկին յափշտակելով իրանից 300 ր. և 19 րուբլանոց վերարկուն՝ անյայտացել է յայտնի չէ ուր:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Օ. Դիմովի նոր պիէսան՝ «Весенее безумье», աջողութիւն չը գտաւ հասարակութեան մէջ: Կօմմիսսարժևսկայայի թատրօնը համարեա թէ դատարկ է լինում ամեն անգամ:

◆ Այս օրերս Կօմմիսսարժէվսկայայի թատրօնում բեմ է հանվում Ս. Իւշկէվիչի նոր պիէսան՝ «Комедія брака» վերնագրով:

◆ Այս օրերս Պետերբուրգ է վերադառնալու Կայսերական թատրօնի դերասան Լ. Մ. Սիբիրեակովը, որ գնացել էր Ամերիկա մի քանի ներկայացումների համար: Նիւ-Եօրկում և Բօստօնում Սիբիրեակովը ունեցել է մեծ աջողութիւն, որտեղ և պայման է կապել կրկին 3 սեզօնի համար:

◆ Կառուցվող նոր «Паласъ Театръ» թատրօնի շէնքը արդէն պատրաստ է: Դեկտեմբերի 14-ին կամ 15-ին նշանակված է նրա հանդիսաւոր բացումը:

◆ Լ. Անդրէևի նոր՝ «Океанъ» պիէսան որ ցենզուրայից արգելվեց, մօտ օրերս լոյս է ընծայելու «Прометей» հրատ. ընկերութիւնը:

◆ Ե. Կարպովայի «Свѣтлая личность»-ը Մոսկվայի Կայսերական փոքր թատրօնում աջողութիւն չը գտաւ:

◆ Վարշավայի օպերային թատրօնի կառավարիչը հրաւիրում է Ֆ. Շալեապինին մի քանի ներկայացումների համար: Շալեապինը համաձայնվել է խաղալ միայն «Русалка» և «Фаустъ» օպերաներում:

◆ Կ. Համսունը այս օրերս նամակ է ուղարկել Մոսկվայի Գեղարուեստական թատրօնի վարչութեան և յայտնել՝ որ ինքը ներկայ է լինելու իր վերջին «У жизни въ лапахъ» պիէսայի առաջին ներկայացմանը:

◆ Մոսկվայի թատրօնական կրուժօկի դիրեկցիան դեկտեմբերի 10-ից սկսել է գրական-գեղարուեստական զրոյցները: Առաջին անգամ խօսեց Իւրեւը, Կայսերական Գեղարուեստական և Կ. Նեզլօբինի թատրօնների մասին:

◆ Ս. Իւշկէվիչը մերժեց Մոսկվայի Գեղարուեստական թատրօնի վարչութեան առաջարկը իր «Miserere» պիէսան փոփոխութեան ենթարկելու համար: Վերոյիշեալ թատրօնում, այդ պիէսան առաջին անգամ խաղալու են դեկտեմբերի 16-ին նոյնութեամբ, որից յետոյ յունվարին գնելու են Համսունի «У жизни въ лапахъ» պիէսը:

◆ Առաջիկայ տօներին Մոսկվայի Գեղարուեստական թատրօնը խաղալու է «Братья Карамазовы» պիէսայի երկու մասերն էլ: Այնպէս որ հասարակութիւնը թատրօնում է մնալու առաւօտից մինչև ուշ գիշերը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 22 դեկտեմբերի

Հայոց Ազգագրական Ընկերութեան խորհուրդս խորին շնորհակալութիւն է յայտնում հետևեալ անձերին, որոնք հաճեցին նուիրել Ընկերութեանս գրադարան-թանգարանին հնագիտական իրեր և գրքեր. Կարապետ եպիսկոպոս Մազլըմեան 29 կտոր հին դրամներ, Մկրտիչ եպիսկոպոս Աղաւնունի մէկ դրամ, Թորգոմ եպիսկոպոս մէկ դրամ, Կ. քահանայ Ապրեւեան 24 կտոր դրամներ, Յ. Ջաթըլբաշեան 2 արծաթէ դրամ, Մելիք-Ազարեան Վեհ. Մկրտիչ Ա. կաթողիկոսի կիսարձանը, Հմայեակ Վահանեան բրոնզէ իր և 9 գիրք, Ա. Սահակեան 2 բրոնզէ իր, Մ. Աւետիսեան մի ասեղնագործ անձեռոցիկ, Բ. Արծրունի՝ Բարսեղ Արծրունու կնիքը և ասեղնագործ գօտին, արժ. Փ. քահ. Մատինեան մի ասեղնագործ անձեռոցիկ և 3 գիրք, տիկ. Հ. Մարտիրոսեան 2 ոսկէ հին գինտ, օր. Մուրադեան մի հին գեղարդ, պրօֆ. Մառը 2 գիրք, Գ. Խալաթեան 1 գիրք, Կ. Կոստանեան 1 գիրք, Ատրպետ 1 գիրք, Տ. Փիրումեան 1 գիրք, Կ. Բրինձեան 3 գիրք, Ղ. Աղայեան 1 գիրք, Կարապետ Մարութեան Ախալցխայի հայ կնոջ տեղական տարազի մի ձեռք հանդերձ և գլխի զարդարանք:

Խորհուրդս ի նկատի առնելով, որ տեղական զգեստները սաստիկ արագութեամբ անհետանում են, յատուկ խնդրում է Մարութեանի նման նուիրել Ընկերութեանս Ազգագրական թանգարանին տեղական հանդերձներ, գլխի զարդարանք, զարդեր, ինչպէս նաև հին ասեղնագործ կտորներ:

Նախագահ՝ Ա. Մելիք-Ազարեան
Անդամ-քարտուղար՝ Ե. Լալայեան

—

Թիֆլիս, 21 դեկտեմբերի

Անցեալ տարվայ «Մշակի» № 291-ում և այս տարվայ № 243-ում Գանձակի գաւառի հայ-թուրքական ընդհարումներին ենթարկված և աւերված Ղարադաղլու գիւղի բնակիչները՝ իրանց քայքայված եկեղեցու և դպրոցի շէնքերը վերաշինելու համար դիմել էին Բարեգործական Ընկերութեան և բարեսիրտ հայ ունևորներին. սակայն մինչև այժմ գիւղի դիմումները մնալով ձայն բարբառոյ... մի համայնական ժողովով գրաւոր լիազօրութիւն տուեց մեզ վերոյիշեալ նպատակի համար դիմումներ անելու:

Լիազօրութեան փաստաթղթերը ներկայացնում ենք «Մշակի» խմբագրութեան, որի միջոցով և կարելի է օգնութիւններ հասցնել:

Ղարադաղլու գիւղի լիազօրներ՝
Կար. Ղազարեան
Միք. Օհանջանեան

—

Թիֆլիս, 16 դեկտեմբերի *)

Մօտիկից ծանօթ լինելով Ղրիմ Թերակղզու հայ իրականութեան հետ, վճռական կերպով կարող եմ յայտնել, որ «Մշակի» № 279-ում Եւպատօրիայից գրված նամակը 5 հոգու ստորագրութեամբ՝ իր մէջ պարունակում է սոսկ տեղի քահանայի խնդիրները պաշտպանելու ցանկութիւնը:

Փաստերով կարող ենք ապացուցել, որ Ղրիմի մի քանի հայ դպրոցների շուրջը կատարված անախորժութիւնների հեղինակը գլխաւորապէս Եւպատօրիայի քահանայի նման տիպարներից են: Եթէ հարկը պահանջի, Ղրիմի այդ տխուր երևոյթի փաստերով նկարագրութիւնը մենք կը հանենք հրապարակ, ցոյց տալու համար չարիքի արմատը:

Պէտք է խնայել մամուլի էջերը՝ խմբական ստորագրութիւններով տգիտութեան ռահվիրաններին չը փառաբանելու համար, պէտք է լռել, չը խօսել այն մարդկանց մասին, որոնք «ազգասիրութեան» դիմակով պղտոր ջրում ձուկ են որսում...

Նախկին ուսուցիչ՝ Մ. Ս.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 դեկտեմբերի

ՑԱՐՍԿՈՅԷ ՍԵԼՕ: Թագաւոր կայսրը ներկայ եղաւ ծովապետ բարօն Շիլլինգի հոգեհանգստին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Սարատովի նահանգապետ Տատիշչէվը պաշտօնից արձակվում է խնդրագրի համաձայն:

Առևտրի մինիստրը թոյլ տուեց յունվարի 1-ին Պետերբուրգում գումարել Ուրալի հանքարդիւնաբերողների համագումար:

Միջմինիստրական յանձնաժողովը ֆինանսների մինիստրի օգնականի նախագահութեամբ որոշեց մինչև եկամտային հարկ մտցնելը, մտցնել զինուորական տուրք՝ իւրաքանչիւր զինուորական ծառայութիւնից ազատվողից վեց րուբլի:

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆ: Անձնասպան եղաւ տեղական զօրամասի հրամանատար կապիտան Տունօշէնսկին, որ արձակված էր պաշտօնից վատնումների համար:

ԳՕՄԵԼ: Զէմստվային ժողովը ազգաբնակութեան գիւղատնտեսական օգնութեան համար յատկացրեց 11,000 ր. անվերադարձ, և 5,000 ր. փոխարինաբար, տնայնագործական արհեստը զարգացնելու համար 5000 ր. և որոշեց հրաւիրել մասնագէտ հրահանգչի:

ԳՐՕԴՆՕ: Գնացքի մէջ այրվեց 3-րդ կարգի վագօններից մէկը: Տաս ճանապարհորդ ստացան խանձուածքներ և վէրքեր: Կան դիակներ: Զոհերի թիւը յայտնի չէ:

ԿԻԵՎ: Եբրարժում 4 զինված աւազակներ յարձակվեցին հրէայ Վախնովէցկիի տան վրա, սպանեցին նրան, ծանր վիրաւորեցին կնոջը և 2 աղջիկներին: և յափշտակեցին աննշան գումար, սակայն ձերբակալվեցին:

ՀՌՈՄ: Եկաւ առատ ձիւն:

ՏՈՒԼՕՆ: «Слава» զրահանաւի սպանված ռուս նաւաստիի թաղմանը մասնակցում էին իշխանութիւնները: Դագաղից առաջ տանում էին ռուսական և ֆրանսիական նաւաստիների 3 րդ հետևակ գնդի և քաղաքի դրած պսակները: Նաւատորմի բոլոր նաւերը և զօրքերը ուղարկել էին պատգամաւորութիւններ:

ՍԱՆ-ՍԵԲԱՍՏԻԱՆ: Կայարանում էլեկտրաքարշի պայթումից սպանվեց 1, վիրաւորվեցին 3 հոգի:

*) Այս նամակով փակում ենք բանակռիւը այս հարցի մասին: Խմբ.

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի [illegible]
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՍՐՍԿՈՒՄՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—11 ժ. աչքի, ներքին և ներարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Գ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԽՐԵԿՈՆԵՐԸ
ԿԻՆ ԲԺԻՇԿ Գ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—139

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ:
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաներ) / 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տելէֆօն № 388.
(Ե.Հ.Կ.) 909. 100—58

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր { Առաւօտ. ժ. 9—12 / Երեկոյ. ժ. 5—7
(Ե.Հ.Կ.) 1254. 100—17

ՖԵԼԴՇԵՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԴԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Կատարում է սրսկումներ, վէրքի փաթաթումն, գեղեցիկ քսումն (втираніе) և այլն: Բժշկութիւն ցռամարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ երազախաբի: Մասսաժ էլեկտրական և ձեռքով: Բժշկական մարմնամարզութիւն: Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկներ—վեներական, ներքին և այլ հիւանդութիւնների: Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր: Չքաւորներին ձրի միմիայն չորեքշաբթի օրերը: Վորոնցովի արձանի մօտ, Семеновская ул. № 9.
(Կ. Հ.) 913. 50—37

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սամարղանդի
հայ գաղութի համար
◆ ՀԱՐԿԱՒՈՐ Է ◆
միջնակարգ կրթութեամբ և ռուսաց լեզուին տիրապետող
◆⊕ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ ՔԱՀԱՆԱՅ ⊕◆
Դիմել՝ Самаркандъ, В. Айвазянцу. Торговый Домъ „Таронъ“.
(Հ. Կ. Ե.) 1415. 8—1

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԱՑԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ
— ՊԱՀԱՆՋԵՑԷՔ ՁՐԻ —
ՆՄՈՒՇՆԵՐԸ և գները բարձր, միջակ և ցածր տեսակի ԱԼԻՒՐՆԵՐԻ՝ կրուպչատկա, սեանկա, ռազմօլ, նաև զանազան տեսակ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐԻ: Ունեմ յայտնի ֆիրմաներից ներկայացուցչութեան իրաւունք և պատրաստում եմ ալիւր իմ սեփական ցորենից զանազան կայարաններում:
Որոշ շրջանների համար տալիս եմ ներկայացուցչութեան իրաւունք:
Դիմեցէք՝ СТАВРОПОЛЬ-губ. Мисаку А. ФАЛАКЯНЦУ.
Հեռագ. ի համար՝ СТАВРОПОЛЬ-губ. ФАЛАКЯНЦУ.
Յարգանքով՝ Մ. Յ. ՖԱԼԱԿԵԱՆՑ
(Հ. Կ.) 1241. 18—15

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում:
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց գործնական ձևով հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկաներ 4 ամսվայ ընթացքում:
Կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվում են յունվար ամսից ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ և սղագրութիւն (стенографія) ըստ ցանկութեան և որոշ վճարով:
Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան: Պարապմունքները սկսվում են 1911 թ. ՅՈՒՆՎԱՐԻ 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ: Ծրագիրը ուղարկվում է ձրի:
Դասընթացքն աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատտեստատներ:
Դրանից անկախ՝ բացված են քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թւաբանութեան համար:
Ցանկացողներին խնդրում ենք դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, Телефонъ № 744.
Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում: Օտարաքաղաքցիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու. Գինն է 3 ր. 50 կ.:
(Կ.Ե.Հ.) 1385. 0—4

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1911 Թ.

որ լոյս է տեսնելու Թիֆլիսում շաբաթը մի անգամ.
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը առաջիկայ տարում ունենալու է աշխատակիցների ուժեղացրած կազմ:
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ի իւրաքանչիւր համարը լինելու է պատկերազարդ:
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը հայոց մէջ միակ գիւղատնտեսական շաբաթաթերթն է:
Բաժնեգինը «ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը առաջիկայ 1911 թւականին տալու է իր բոլոր ՏԱՐԵԿԱՆ բաժանորդներին
Բոլոր ձրի նուէրներով ՏԱՐԻՆ 3 ՌՈՒԲԼԻ Ռուսաստանում
Հետևեալ նուէրները.
1) Գիւղատնտեսական Օրացոյց 1911 թւականի—պատկերազարդված մօտ 40 նկարներով, գիւղատնտեսական զանազան ճիւղերին վերաբերեալ բազմաթիւ յօդուածներով և հարուստ տեղեկատու բաժնով՝ 3—4 տպ. թերթից—մարտին:
2) Բանջարների լաւագոյն սերմեր 1911 թւականի համար, դրանց ցանելու եղանակների ցուցմունքներով:
3) «Գիւղատնտեսական մեքենաների և գործիքների ընտրութիւնը», կազմեց Ա. Աթանասեան: Պատկերազարդ ձեռնարկ ամեն մի մարդու համար որ պարապում է գիւղատնտեսութեամբ:
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը հայ գիւղացիութեան և գիւղատնտեսութեամբ պարապողների համար եղել է անցեալ երկու տարիներում միակ թերթը, որից ընթերցողները քաղել են գիւղատնտեսական զանազան ճիւղերին վերաբերեալ գործնական խորհուրդներ և ցուցմունքներ:
«ԳԻՒՂԱՏՆՏԵՍ»-ը աչքի առաջ ունի ոչ միայն Ռուսաստանի՝ Կովկասում և Անդրկովկասում ապրողների գիւղատնտեսական կարիքները, այլ և Թիւրքահայաստանի, Պարսկաստանի և Անդրկասպեան երկրի:
ԲԱԺՆԵԳԻՆԸ
Ռուսաստանում: Տարեկան 3 ր. Կէս տարին 2 ր.
Արտասահմանում: Տարեկան 4 ր. Կէս տարին 2 ր. 50 կ.
(Հ. Շ.) 1378. 10—4

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1911-Й ГОДЪ
(XXXIV-й годъ изданія)
На газету
„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“.
Газета выходитъ ЕЖЕДНЕВНО, кромѣ понедѣльниковъ и дней послѣпраздничныхъ.
ПОДПИСНАЯ ЦѢНА
(Не включая 5-коп. гербоваго сбора)
СЪ ДОСТАВКОЙ ВЪ ТИФЛИСѢ: На годъ—5 р., на 6 м.—3 р., на 3 м.—1 р. 75 к.
СЪ ПЕРЕСЫЛКОЙ ДЛЯ ИНОГОРОДНИХЪ: На годъ—7 р., на 6 м.—4 р., на 3 м.—2 р. 50 к.
Подписка принимается на любой срокъ, но только съ 1-го числа каждаго мѣсяца исключительно въ конторѣ изданія; Крузенштернская ул. 4. Плата за объявленія для Закавказья за мѣсто, занимаемое строкой петита, передъ текстомъ—10 к. и послѣ текста—5 коп. Извѣщенія о зрѣлищахъ печатаются на первой страницѣ по 20 коп. за строку и на 4-й—10 коп. За объявленія въ справочномъ отдѣлѣ взимается по 8 коп. за строку. Объявленія внѣ предѣловъ Закавказья принимаются исключительно въ центральной конторѣ торговаго дома Л. и Э. Метцль и К° въ Москвѣ, Мясницкая, д. Сытова, и въ отдѣленіяхъ его:-въ С.-Петербургѣ, Большая Морская, 11 въ Варшавѣ, Маршалковская, 130, по 24 к. передъ текстомъ и 12 коп. послѣ текста. 2—2

ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՅԹԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ!
◆—◆ ԳՐՊԱՆԻ ԳՐՈՂ ՄԵՔԵՆԱՅ TAURU ◆—◆
Մինչև այժմ դեռ գոյութիւն չունէր այնպիսի մի յարմարութիւն, որ կարելի լինէր գրպանի մէջ պահել գրող-մեքենայ, որով մարդ կարողանար օգտվել ամենուրեք, այն է՝ տանը, երկաթուղային գնացքի մէջ, ճանապարհին և այլն, որպիսի մեքենան մատուցանում է այն ծառայութիւնը, ինչ որ ամենաթանգագին գրող-մեքենան, և մինչև իսկ գերազանց է համարվում վերջինից նրանով, որ կարելի է հետը շրջեցնել և ամեն ժամանակ ու ամենուրեք կարելի է գործածել նրան: Առաջ է գալիս բնական մի հարց՝ թէ Ի՞ՆՉՊԷՍ ԿԱՐՈՂ Է ԱՅԴՊԻՍԻ ՄԻ ՄԵՔԵՆԱՆ ԳՐԵԼ: Ի պատասխանի դրան բացատրում եմ, որ, շնորհիւ տեխնիկայի զարգացման, հնարաւոր է եղել գրպանի գրող-մեքենայի (մեծութ. մի փոքր ափսէի գրպ. ժամացոյցի) կազմութիւնը այնպէս կատարելագործել, որ մեքենայի շուրջը պարունակում է մօտ 100 տառ. Թուղթ (հետ չեղող, նման հեռագր. թղթի): Չէ պահանջվում նախնական գիտութիւն. այբուբենին ծանօթը կարող է հէնց առաջին անգամից նրանով գրել, դնելով մատը ցանկացած տառի վրա և ճնշելով, որից յետոյ խօսքերը տպվում են միանգամայն պարզ և անխափան: Համարձակվում եմ հաւատացնել, որ ով կը ստանայ „Tauru“ մեքենան, նա անշուշտ ընդմիշտ շնորհակալ կը մնայ ինձանից: Խնդրում եմ մեքենային վերաբերվել լուրջ, ինչպէս իսկապէս գործնական և օգտակար մի առարկայի, այլ ոչ թէ մանկական մի խաղալիքի: Եթէ մեքենան դուր չը գայ, ՓՈՂԸ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ ԵՄ, բայց յոյս ունեմ, որ աւելի շատ երկրորդ պատուէրը կը ստանամ, քան պահանջ՝ փողը վերադարձնելու: Պատուէր ուղարկելուց խնդրում եմ յայտնել թէ ինչ լեզուի մեքենայ ուղարկել, որովհետև ամեն լեզուներով էլ մեքենաներ ունենք: ԳԻՆԸ ՄԻԱՅՆ 7 ր. 50 կ.: Ճանապարհածախսը՝ հանդերձ մաքսով՝ 60 կ. (Սիբիր 90 կ.): Ուղարկում ենք վերադիր վճարով և առանց կանխավճարի: Հասցէն, որը կարելի է կտրել և կպցնել ծրարին կամ բացիկին.


ПАРИЖЪ № 154, PARIS
M-r STRUMFELD S. Rue Mirbel 2 bis.
Պատուէրներով կարելի է դիմել բոլոր լեզուներով: Փակ նամակին կպցնել 10 կ. մարկա, իսկ բացիկին՝ 4 կոպ.:
(Հ.) (B. 93531) 1368. 3—3